

«Ամերիաբանկ» ՓԲԸ միջնորդությամբ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում ծառայությունների մատուցման պայմաններ

Սահմանումներ

Բանկ կամ Հաշվի օպերատոր՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ՝ Համակարգի անդամ, որը Դեպոզիտարիայի հետ կնքած պայմանագրով և կանոններով սահմանված իրավասությունների շրջանակում, միջնորդավորում է Դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում մատուցվող այն ծառայությունները, որոնք անմիջականորեն չեն հանգեցնում Կարգավորվող շուկայում արժեթղթերով գործարքների կնքմանը.

Սակագներ՝ Բանկի միջնորդությամբ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում մատուցվող ծառայությունների սակագներ¹:

Պայմաններ՝ Բանկի միջնորդությամբ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում ծառայությունների մատուցման սույն փաստաթղթում սահմանված պայմանները.

Հաճախորդ՝ անվանական արժեթղթերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրի վարման (այսուհետ՝ ռեեստրի վարում) պայմանագրի կնքման կամ անվանական արժեթղթերի պահառության (այսուհետ՝ պահառություն) պայմանագրի կնքման նպատակով Բանկ դիմած կամ համապատասխանաբար նշված պայմանագրերը կնքած Բանկում սպասարկվող անձը.

Թողարկող՝ իրավաբանական անձ, որը արժեթուղթ է թողարկում (թողարկել) կամ իր անունից արժեթուղթ թողարկելու առաջարկություն է անում, և որի ռեեստրի վարումը կամ պահառությունը պետք է իրականացվի կամ իրականացվում է Դեպոզիտարիայի կողմից.

Հաշվետեր՝ անձ, որն ունի (որի անունով առկա է) Համակարգում բացված արժեթղթերի հաշիվ.

Անվանատեր՝ անձ, որի անունով, առանց սեփականության իրավունքի, հաշվառվում են այլ անձանց պատկանող անվանական արժեթղթերը.

Արժեթղթերի սեփականատերերի ռեեստր կամ Ռեեստր՝ Թողարկողի, վերջինիս կողմից թողարկված անվանական արժեթղթերի, այդ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) և վերջիններիս՝ արժեթղթերով հավաստված իրավունքների վերաբերյալ տվյալների միասնական համակարգ.

Արժեթղթերի հաշիվ՝ արժեթղթերի և դրանց նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների հաշվառման տեղեկատվական հենք.

Ակտիվ հաշիվ՝ Բանկի կամ այլ հաշվի օպերատորի կողմից բացված կամ վերաբացված և նույնականացված արժեթղթերի հաշիվ, որի նկատմամբ հաշվի օպերատորի (այդ թվում Բանկի) հասանելիության իրավունքը դադարեցված չէ.

Համակարգ՝ «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգ» արժեթղթերի հաշվառումն ապահովող և արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում փոխադարձ

¹ «Ամերիաբանկ» ՓԲԸ միջնորդությամբ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում մատուցվող ծառայությունների սակագներ (13FOD FO 72-20-01), ընդունվել է Տնօրինության 13.03.2014թ. թիվ 09/14/14 որոշմամբ: Հղումը՝ <https://ameriabank.am/useful-links>

պարտավորությունների կատարման և այդ պարտավորությունների կատարումը երաշխավորող տեխնիկական և իրավական միջոցների/ տեղեկությունների ամբողջություն.

ԱՄՏԾ (ԱՄՏ)՝ Դեպոզիտարիայի «Արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագրի շնորհման» կանոններով արժեթղթերին շնորհված միջազգային տարբերակիչ ծածկագիր (արժեթղթերի նույնականացնող ծածկագիր):

Դեպոզիտարիա՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ

Դեպոզիտարիայի կանոններ՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններ,

Դեպոզիտարիայի պաշտոնական կայք՝ www.cda.am ինտերնետային կայք,

Բանկի պաշտոնական կայք՝ www.ameriabank.am ինտերնետային կայք,

Կարգավորվող շուկա՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ կողմից կազմակերպվող արժեթղթերի շուկա.

Անհրաժեշտ փաստաթղթեր՝ «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում ծառայությունների համար անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ»²

Հանձնարարական՝ Համակարգում գործառնություններ (բացառությամբ տեղեկությունների տրամադրման) կատարելու համար հիմք հանդիսացող թղթային կամ էլեկտրոնային փաստաթղթով ներկայացված հանձնարարություն.

Դեպո հանձնարարական՝ Հաճախորդի կողմից Համակարգում պետական արժեթղթերով գործառնություններ կատարելու հանձնարարություն.

Դեպո հաշիվ՝ արժեթղթերի հաշիվ, որում հաշվառվում են պետական արժեթղթեր.

ՀՏ հաղորդագրություն՝ ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված և համապատասխան համարներով տարբերանշված հանձնարարականի կամ տեղեկությունների էլեկտրոնային ձևաչափ:

Գործառնություն՝ Համակարգում գրանցված արժեթղթի Հաշվետիրոջ, Թողարկողի, վերջիններիս լիազորված ներկայացուցիչների կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անձանց հանձնարարականի հիման վրա Բանկի միջնորդությամբ իրականացվող գործողություն, որի արդյունքում տեղի է ունենում արժեթղթերի հաշվի բացում, արժեթղթերի հաշվում առկա տեղեկությունների փոփոխություն, արժեթղթերի հաշվի փակում, արժեթղթերի հաշվում գրանցված արժեթղթերի մնացորդի փոփոխություն, Համակարգում այլ տեղեկությունների գրանցում և/կամ Համակարգից տեղեկությունների տրամադրում:

Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթուղթ՝ Դեպոզիտարիայի՝ Օտարերկրյա պահառուի մոտ բացված անվանատիրոջ հաշվում հաշվառվող արժեթուղթ:

Օտարերկրյա պահառու՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս արժեթղթերի պահառության գործունեություն իրականացնելու իրավասություն ունեցող անձ:

² «Ամերիաբանկ» ՓԲԸ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում ծառայությունների համար անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ (13FOD LI 72-26-01), ընդունվել է Տնօրինության 10.04.2014թ. թիվ 27/01/14 որոշմամբ: Հղումը՝ <https://ameriabank.am/useful-links>

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Պայմանները սահմանում են Բանկի միջնորդությամբ Դեպոզիտարիայի կանոններով սահմանված Համակարգի հիմնական և լրացուցիչ, ինչպես նաև պետական պարտատոմսերի և օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահառությամբ կամ ենթապահառությամբ պայմանավորված ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները:
- 1.2. Պայմանները, Սակագները, Անհրաժեշտ փաստաթղթերը սահմանվում և կարող են միակողմանիորեն փոփոխվել Բանկի կողմից, հասանելի են Բանկի տարածքում և Բանկի ինտերնետային կայքում: Դրանցում փոփոխությունները Բանկը Հաճախորդին ծանուցում է ոչ ուշ, քան ուժի մեջ մտնելու օրը՝ Բանկի տարածքում, Բանկի ինտերնետային կայքում դրանք հասանելի դարձնելու, նաև հրապարակելու միջոցով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև Հաճախորդի կողմից ընտրված հաղորդակցման նախընտրելի այլ եղանակով:
- 1.3. Պայմաններում կիրառվող հասկացություններն ունեն այն նույն նշանակությունը, ինչը սահմանված է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, Դեպոզիտարիայի կանոններով և տվյալ իրավահարաբերություններին վերաբերելի այլ իրավական ակտերով:
- 1.4. Պայմաններով սահմանված Գործառնությունների իրականացման համար հիմք է ընդունվում Համակարգում առկա տեղեկատվությունը:
- 1.5. Բանկը ռեեստրի վարման և արժեթղթերի պահառության ծառայությունները Հաճախորդին մատուցում է համապատասխան պայմանագրերի կնքման արդյունքում, որոնց օրինակելի ձևերը սահմանվում են Դեպոզիտարիայի կողմից:
- 1.6. Պայմաններով սահմանված ծառայությունները մատուցվում են Բանկի կողմից՝ Անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա:
- 1.7. Բանկը Հաճախորդի հետ հաղորդակցվում է, այդ թվում՝ ուղարկում է հաղորդագրություններ, Պայմանների ներքո մատուցվող ծառայությունների հետ կապված փաստաթղթեր, տեղեկացնում է Գործառնությունների գրանցման կամ մերժման մասին՝ Հաճախորդի հետ համաձայնեցված եղանակով և հաղորդակցման տվյալներով:
- 1.8. Բանկը Պայմանների ներքո Հաճախորդին ծառայություններ մատուցելու, Հաճախորդի հետ հաղորդակցման, տեղեկատվության փոխանակման համար կարող է կիրառել Բանկի կողմից Հաճախորդների սպասարկման հեռավար համակարգերն ու կապի միջոցները, եթե այլ բան նախատեսված չէ Պայմաններով, Դեպոզիտարիայի կանոններով և/կամ ՀՀ օրենսդրությամբ:
- 1.9. Ներդրումային ֆոնդերի, որոնց ռեեստրի վարումն իրականացվում է Դեպոզիտարիայի կողմից ուղղակիորեն, փայերի բաժանորդագրման և մարման ծառայությունները Բանկի կողմից մատուցվում են Դեպոզիտարիայի «Ներդրումային ֆոնդերի թողարկած փայերի ադմինիստրավորման ծառայությունների մատուցման» կանոններով և Պայմանների «9. Արժեթղթերի փոխանցում» բաժնում սահմանված կարգով այն Հաշվետերերին, որոնք ունեն Համակարգում Բանկի միջնորդությամբ բացված արժեթղթերի սեփականատիրոջ հաշիվ:
- 1.10. Անհրաժեշտ փաստաթղթերը Բանկի կողմից ստացված են համարվում դրանց ամբողջական փաթեթը Բանկ մուտքագրվելու պահից, եթե այլ բան չի բխում ծառայությունը ապահովող համապատասխան գործառնության էությունից:
- 1.11. Եթե ՀՀ օրենսդրությամբ, Դեպոզիտարիայի կանոններով, Բանկի ներքին իրավական ակտերով և/կամ կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված պահանջներից ելնելով՝ Պայմաններով

սահմանված գործառույթների կատարման նպատակով Բանկին անհրաժեշտ են լրացուցիչ փաստաթղթեր, տեղեկատվություն, պարզաբանումներ, Բանկը կարող է ծառայությունների մատուցման ժամկետները երկարաձգել այնքան ժամանակով, որքան անհրաժեշտ է դրանք ստանալու համար:

- 1.12. Բանկը Պայմանների ներքո ծառայություններ մատուցելիս Հաճախորդի անձնական տվյալները և Հաճախորդի Գործառնությունները Համակարգում գրանցելով՝ դրանք հասանելի է դարձնում Դեպոզիտարիային:
 - 1.13. Պայմաններով նախատեսված ծառայությունները մատուցում են Սակագներով սահմանված վճարումների կատարումը Հաճախորդի կողմից ապահովելու նախապայմանով:
 - 1.14. Պայմաններով սահմանված ծառայությունների մատուցման համար Բանկը Հաշվետիրոջ/Թողարկողի հետ համապատասխան պայմանագրեր կնքում և ծառայություններ մատուցում է միայն այդ սուբյեկտների նույնականացման դեպքում:
 - 1.15. Ստորև նշված դեպքերում Բանկն իրավասու է մերժել, կասեցնել Հաճախորդին ծառայության տրամադրումը, մերժել Հաճախորդի հետ իրավահարաբերությունների հաստատումը.
 - 1.15.1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ օրենսդրության, Դեպոզիտարիայի կանոնների պահանջներին և/կամ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան,
 - 1.15.2. Բանկի օրինական պահանջները Հաճախորդի կողմից չկատարելու, այդ թվում Բանկի նկատմամբ պարտավորությունները ժամանակին չվճարելու, Պայմանների խախտման, Բանկի կողմից պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը չտրամադրելու դեպքում,
 - 1.15.3. Պայմաններով, Սակագներով նախատեսված դեպքերում:
- Ընդ որում, Բանկի՝ սույն կետում նշված գործողությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:
- 1.16. Բանկը մերժում է Հաճախորդի հարցմամբ պահանջվող տեղեկությունների տրամադրումը, եթե Հաճախորդի հարցումը չի համապատասխանում Դեպոզիտարիայի կանոններով, Պայմաններով սահմանված պահանջներին կամ եթե Հաճախորդը չի վճարել կամ հրաժարվում է վճարել տեղեկությունների տրամադրման համար Սակագներով սահմանված վճարները:
 - 1.17. Համապատասխան մերժման հիմքերի առկայության դեպքում Բանկը մերժում է Հաճախորդի հանձնարարականների կամ հարցումների կատարումը՝ Հաճախորդի կողմից Բանկ դիմելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ տեղեկացնելով մերժման պատճառների մասին: Ընդ որում, Բանկը մերժում է Հաճախորդի հանձնարարականների կամ հարցումների կատարումը, եթե ներկայացված փաստաթղթերը թերի են, ոչ լիարժեք, կամ դրանցում առկա է ապատեղեկատվություն, անհամապատասխանություն, կամ առկա է այլ փաստաթղթով կամ տեղեկատվությամբ հաստատված այլ իրավիճակ կամ եթե չեն համապատասխանում Պայմաններին, կամ եթե Հաճախորդի կողմից չեն կատարվում Սակագներով սահմանված վճարումները:
 - 1.18. Կարգավորվող շուկայում արժեթղթերով կնքված գործարքների քլիրինգ և վերջնահաշվարկ իրականացվում է Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով:

1.19. Բանկը Հաշվետիրոջ հանձնարարականի հիման վրա Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամին տրամադրում է հասանելիություն Հաշվետիրոջ արժեթղթերի հաշվին՝ Կարգավորվող շուկայում արժեթղթերով գործարքների կնքման համար:

2. Ռեեստրի վարում

2.1. Թողարկողը Բանկի միջնորդությամբ ռեեստրի վարմամբ պայմանավորված բոլոր ծառայություններից օգտվելու համար կնքում/վերակնքվում է ռեեստրի վարման եռակողմ պայմանագիր (այսուհետ՝ սույն գլխում Պայմանագիր) Դեպոզիտարիայի և Բանկի հետ:

2.1.1. Բանկի միջնորդությամբ պայմանագիրը կնքվում է, եթե Թողարկողի ռեեստրի վարում չի իրականացվում Դեպոզիտարիայի կողմից՝ Թողարկողը Դեպոզիտարիայի հետ չունի կնքված ռեեստրի վարման պայմանագիր:

2.1.2. Բանկի միջնորդությամբ Պայմանագիրը վերակնքվում է, եթե Թողարկողի ռեեստրի վարման պայմանագիրը վարվում է Դեպոզիտարիայի կողմից՝ Թողարկողն ունի Դեպոզիտարիայի հետ առանց հաշվի օպերատորի միջնորդության կամ որևէ այլ հաշվի օպերատորի (բացառությամբ Բանկի) միջնորդությամբ կնքված Ռեեստրի վարման պայմանագիր:

2.2. Բանկը Թողարկողի հետ կնքում/վերակնքում է Ռեեստրի վարման պայմանագիր Թողարկողի կողմից Անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում.

2.2.1. Եթե Թողարկողը թողարկել և/կամ թողարկում է մեկից ավելի տեսակի (դասի) այնպիսի արժեթղթեր, որոնց համար օրենքով և/կամ թողարկման պայմաններով նախատեսված է դրանց սեփականատերերի ռեեստրների վարում, ապա Ռեեստրի վարմամբ պայմանավորված ծառայությունները Թողարկողին մատուցվում է Բանկի միջնորդությամբ և պայմանով, որ Թողարկողը Բանկի միջնորդությամբ կվերակնքի նաև այլ հաշվի օպերատորի միջնորդությամբ կամ առանց դրա Դեպոզիտարիայի հետ նախկինում կնքած և գործող Ռեեստրի վարման պայմանագրերը, եթե այդպիսիք առկա են,

2.2.2. Եթե ռեեստրի վարման պայմանագրի կնքման ժամանակ Թողարկողն իրականացնում է նախկինում տեղաբաշխված արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխում, որի գործընթացը դեռ չի ավարտվել կամ Թողարկողի հետ կնքվում է այնպիսի արժեթղթերի ռեեստրի վարման պայմանագիր, որոնց տեղաբաշխումը դեռ չի իրականացվել կամ ավարտվել, ապա արժեթղթերի տեղաբաշխումը գրանցվում է Պայմաններով սահմանված կարգով՝ ըստ ներկայացված Անհրաժեշտ փաստաթղթերի Համակարգում ռեեստրի վարման պայմանագիր կնքելուց հետո ,

2.2.3. Եթե Ռեեստրի վարման պայմանագրի վերակնքման ժամանակ առկա են Թողարկողին և նրա տվյալ տեսակի (դասի) արժեթղթերի Ռեեստրին վերաբերող և դեռ Համակարգում չգրանցված տեղեկությունների փոփոխություններ կամ Բանկը բացահայտում է այդպիսի փոփոխությունների առկայությունը, ապա Բանկի միջնորդությամբ Ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքվում է նշված փոփոխությունների գրանցման համար Անհրաժեշտ փաստաթղթերը Թողարկողի կողմից ներկայացնելուց, ինչպես նաև անհրաժեշտ վճարումները կատարելուց հետո,

- 2.2.4. Պայմանագրի կնքում/վերակնքում չի կարող իրականացվել, եթե Թողարկողը Համակարգում ունի դրամական պարտավորություններ, որոնց մարումը հիմք է Պայմանագրի կնքման/վերակնքման գործընթացը շարունակելու համար:
- 2.3. Բանկը Ռեեստրի վարման պայմանագրի կնքման/վերակնքման հետ միաժամանակ անհրաժեշտության դեպքում (եթե Թողարկողն ունի հետգնված (ձեռքբերված) և չմարված տվյալ դասի արժեթղթեր և չունի Բանկի հետ նախկինում կնքված Թողարկողի արժեթղթերի պահառության պայմանագիր) Պայմաններով սահմանված կարգով արժեթղթերի հաշվի բացման նպատակով Թողարկողի հետ կնքում է Թողարկողի արժեթղթերի պահառության պայմանագիր:
- 2.4. Ռեեստրի վարման ծառայությունների մատուցման և ռեեստրի վարման ծառայության սակագնի հաշվարկման սկիզբ է համարվում Ռեեստրի վարման պայմանագրի կնքման/վերակնքման օրը:
- 2.5. Բանկը Թողարկողին անվճար տրամադրում է արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակ Պայմանագրի կնքման/վերակնքման արդյունքում 3 /երեք/ աշխատանքային օրվա կամ Թողարկողի հետ համաձայնեցված ավելի երկար ժամկետի ընթացքում:
- 2.6. Բանկի միջնորդությամբ Պայմանագրի վերակնքման դեպքում նախկինում կնքված Ռեեստրի վարման և, առկայության դեպքում՝ Թողարկողի արժեթղթերի պահառության պայմանագրերը համարվում են լուծված Ռեեստրի վարման նոր պայմանագրի վերակնքման պահից:
- 2.7. Բանկի միջնորդությամբ Թողարկողին մատուցվում են Ռեեստրի վարմամբ պայմանավորված հետևյալ հիմնական և լրացուցիչ ծառայությունները.

Հիմնական ծառայություններ.

- 2.7.1. Արժեթղթերի տեղաբաշխմամբ պայմանավորված գործառնությունների գրանցում.
- 2.7.2. Կորպորատիվ գործողությունների հետ կապված գործառնությունների գրանցում.
- 2.7.3. Ռեեստրում առկա տեղեկությունների փոփոխությունների գրանցում.
- 2.7.4. Համակարգից տեղեկությունների տրամադրում.
- 2.7.5. Համակարգում կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունների հրապարակում.

Լրացուցիչ ծառայություններ.

- 2.7.6. Արժեթղթերից ստացված եկամուտների, պարտատոմսերի մարման արդյունքում վճարահաշվարկային գործառնությունների (կորպորատիվ գործառնություններ) իրականացում Համակարգում,
- 2.7.7. Թողարկողի կողմից տեղաբաշխված արժեթղթերի՝ օրենքով և Թողարկողի Կանոնադրությամբ սահմանված ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացում Համակարգում,
- 2.7.8. Ծանուցում Թողարկողին իր կողմից տեղաբաշխված արժեթղթերով իրականացված գործառնությունների մասին, որը ներառում է տվյալ արժեթղթերի փոխանցման, գրավի կամ այլ հիմքով այդ արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ տեղեկությունների տրամադրում:

3. Արժեթղթերի տեղաբաշխման և կորպորատիվ գործառնությունների հետ կապված գործառնությունների գրանցում

- 3.1. Արժեթղթերի տեղաբաշխումը Բանկի միջնորդությամբ Համակարգում գրանցվում է արժեթղթերի առաջնային տեղաբաշխման կամ լրացուցիչ տեղաբաշխման գործառնությունների ձևով:
- 3.2. Եթե արժեթղթերը տեղաբաշխվելու են Կարգավորվող շուկայում, Բանկի կողմից բացվում է տեղաբաշխվող արժեթղթերի հաշիվ, որին հաշվեգրվում են տեղաբաշխման ենթակա արժեթղթերը Թողարկողից Անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում, և ոչ ուշ, քան կարգավորվող շուկայում արժեթղթերի տեղաբաշխման իրականացման նախորդ օրը:
- 3.3. Բանկը Թողարկողին տրամադրում է տեղեկանք թողարկված արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ:
- 3.4. Եթե արժեթղթերի տեղաբաշխման ավարտի դրությամբ տեղաբաշխվող արժեթղթերի հաշվում դեռ առկա են չտեղաբաշխված արժեթղթեր, այդ արժեթղթերը չեղարկվում են՝ համաձայն Թողարկողի հանձնարարականի:
- 3.5. Տեղաբաշխվող արժեթղթերի հաշիվը փակվում է Թողարկողի հանձնարարականի հիման վրա, կամ եթե լուծվում է Թողարկողի ռեեստրի վարման պայմանագիրը ապա ռեեստրի վարման պայմանագրի լուծման հիմքով:
- 3.6. Եթե արժեթղթերը տեղաբաշխվում են Կարգավորվող շուկայից դուրս, Բանկը Թողարկողի կողմից Անհրաժեշտ փաստաթղթերի ստացման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է արժեթղթերի տեղաբաշխման արդյունքները Համակարգում և Թողարկողին տրամադրում արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակ:
- 3.7. Լրացուցիչ կամ նոր դասի (տեսակի) բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում մինչև այդ արժեթղթերի տեղաբաշխման արդյունքների պաշտոնապես ամրագրումը հավաստող փաստաթղթերը Թողարկողի կողմից Բանկ ներկայացման հաջորդ օրը, Բանկի տեղեկացմամբ Դեպոզիտարիան Համակարգում սահմանափակում է տեղաբաշխված (ձեռքբերված) բաժնետոմսերով գործառնություն իրականացնելու (ձայնի իրավունք տվող արժեթղթերի դեպքում՝ նաև ձայնի իրավունքի մասին տեղեկատվության տրամադրման) հնարավորությունը և այդ մասին հրապարակում է Դեպոզիտարիայի պաշտոնական ինտերնետային կայքում:
- 3.8. Բանկը չի իրականացնում սահմանափակման ներքո գտնվող արժեթղթերի փոխանցման կամ արժեթղթերի նկատմամբ իրավունքների փոփոխման հանձնարարականների ընդունում կամ կատարում:
- 3.9. Եթե Թողարկողն իրականացնում է նոր դասի արժեթղթերի տեղաբաշխում և տվյալ արժեթղթերի թողարկման (տեղաբաշխման) համար սահմանված ժամկետներում Համակարգում չի գրանցվում արժեթղթերի տեղաբաշխման (Հաշվետիրոջ հաշվում ամրագրման) գործառնություն, ապա Թողարկողի դիմումի հիման վրա արժեթղթերի ռեեստրի վարման պայմանագիրը լուծվում է:
- 3.10. Կորպորատիվ գործառնությունները ենթադրում են Թողարկողի որոշմամբ տվյալ թողարկողի որևէ դասի (տեսակի) արժեթղթերի անվանական արժեքի փոփոխություն, փոխարկում, բաժանում, համախմբում, հետզնում, ձեռքբերում, մարում, չեղյալ համարում կամ Թողարկողի վերակազմակերպում կամ արժեթղթերի եկամուտների վճարում; Ընդ որում.

- 3.10.1. Արժեթղթերի բաժանումը Թողարկողի տվյալ դասի արժեթղթերի փոխարկումն է նույն դասի ավելի մեծ քանակի արժեթղթերի.
- 3.10.2. Արժեթղթերի համախմբումը Թողարկողի տվյալ դասի արժեթղթերի փոխարկումն է նույն դասի ավելի փոքր քանակի արժեթղթերի.
- 3.10.3. Արժեթղթերի ձեռքբերումը Թողարկողի կողմից տեղաբաշխված արժեթղթերի որոշ մասի՝ Թողարկողի կողմից գնման գործընթաց, որի իրականացման մասին որոշման ընդունումը Թողարկողի համար օրենքով սահմանված պարտավորությունն չէ.
- 3.10.4. Արժեթղթերի հետզնումը Թողարկողի կողմից տեղաբաշխված արժեթղթերի (բացառությամբ բաց ներդրումային ֆոնդերի արժեթղթերի) որոշ մասի՝ Թողարկողի կողմից գնման գործընթաց, որի իրականացումը տվյալ արժեթղթերի թողարկման (տեղաբաշխման) որոշմամբ կամ օրենքով պարտադիր է.
- 3.10.5. Արժեթղթերի փոխարկումը Թողարկողի տվյալ դասի արժեթղթերի շրջանառությունից հանումը և չեղյալ համարումը (Համակարգից հեռացումը) նույն Թողարկողի կամ այլ Թողարկողի արժեթղթերով փոխանակելու միջոցով.
- 3.10.6. Արժեթղթերի չեղարկումը Թողարկողի տվյալ դասի արժեթղթերի շրջանառությունից դուրս գալու հիմքով չեղյալ համարումն է.
- 3.10.7. Կորպորատիվ գործառնության գրանցման արդյունքում կոտորակային (ոչ ամբողջական) արժեթղթերի (այդ թվում՝ բաժնետոմսերի) առաջացման դեպքում դրանք ենթակա են թողարկողի կողմից հետզնման ՀՀ օրենսդրությամբ և Թողարկողի որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում:
- 3.11. Եթե Թողարկողն իրականացրել է մի քանի կորպորատիվ գործողություններ, ապա դրանցից յուրաքանչյուրով պայմանավորված գործառնությունները Համակարգում գրանցվում են որպես յուրաքանչյուրը առանձին գործառնություն՝ համաձայն իրականացման հերթականության:
- 3.12. Կորպորատիվ գործառնությունները Բանկի միջնորդությամբ Համակարգում գրանցվում են Թողարկողի կողմից Անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում (եթե կորպորատիվ գործողության գրանցման հանձնարարականով այլ ավելի երկար ժամկետ սահմանված չէ կամ այլ բան չի բխում կորպորատիվ գործողության էությունից): Ընդ որում.
 - 3.12.1. Վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծված թողարկողը (դադարած թողարկողի իրավահաջորդը) մինչև ժամանակ Բանկի միջնորդությամբ պետք է կնքի ռեեստրի վարման պայմանագիր, իսկ դադարած ընկերության պայմանագիրը համարվում է լուծված: Թողարկողի իրավահաջորդը պարտավոր է վճարել դադարած թողարկողի՝ Բանկի, այլ հաշվի օպերատորների և Դեպոզիտարիայի նկատմամբ ունեցած պարտավորությունները:
 - 3.12.2. Եթե բաժանման, միացման կամ միաձուլման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում Բանկի Հաճախորդ է հանդիսանում իրավահաջորդ թողարկողը, ապա վերջինս պարտավոր է Բանկին տրամադրել դադարած թողարկող(ներ)ի վերաբերյալ տեղեկություններ և վերջին(ներ)իս դադարման փաստը հավաստող պետական գրանցման տեղեկանքը, որի հիման վրա Համակարգում դադարեցվում է դադարած Թողարկող(ներ)ի ռեեստրի վարումը, իսկ պայմանագիրը համարվում է լուծված:
 - 3.12.3. Արժեթղթերի մարման գործառնության գրանցումը իրականացվում է Թողարկողի կողմից Բանկ ներկայացված արժեթղթերի մարման գործառնության գրանցման մասին

հանձնարարականի հիման վրա: Արժեթղթերի մարման գործառնության գրանցումից հետո արժեթղթերը չեղյալ են համարվում, ընդ որում ժամկետային արժեթղթերի մարման դեպքում Բանկը տեղեկացնում է Հաշվետերերին:

- 3.13. Բանկը կորպորատիվ գործառնությունների գրանցման արդյունքում Թողարկողին տրամադրում է անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակ:
- 3.14. Բանկը կորպորատիվ գործառնությունների գրանցման արդյունքում կոտորակային արժեթղթերի սեփականատեր (անվանատեր) հանդիսացող Հաճախորդների հարցման հիման վրա վերջինիս անվճար տեղեկացնում է կորպորատիվ գործողության արդյունքում կոտորակային արժեթղթերի հետզնման վերաբերյալ:

4. Ռեեստրի վարման պայմանագրի լուծում

- 4.1. Ռեեստրի վարման եռակողմ պայմանագիրը լուծվում է.
 - 4.1.1. եթե Թողարկողը վերակնքել է ռեեստրի վարման պայմանագիր այլ հաշվի օպերատորի հետ, ընդ որում Բանկը Դեպոզիտարիայից ստացված Ռեեստրի վարման պայմանագրի լուծման մասին ծանուցման հիման վրա փակում է Թողարկողի արժեթղթերի հաշիվը՝ մնացորդի առկայության դեպքում նախապես մնացորդը փոխանցելով Թողարկողի՝ Դեպոզիտարիայի կողմից նշված արժեթղթերի հաշվին:
 - 4.1.2. Թողարկողի վերակազմակերպման (բացառությամբ այն դեպքերի, երբ բաց բաժնետիրական ընկերությունը վերակազմավորվում է փակ բաժնետիրական ընկերության, կամ փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորվում է բաց բաժնետիրական ընկերության) և օրենքով նախատեսված այլ դեպքերում, երբ Համակարգում դադարեցվում է Թողարկողի ռեեստրի վարումը, կամ Թողարկողի արժեթղթերը դադարում են գոյություն ունենալ (մասնավորապես՝ ժամկետային արժեթղթերի մարման հիմքով): Թողարկողի վերակազմակերպման (բացառությամբ վերակազմավորման) դեպքում ռեեստրի վարման պայմանագիրը լուծվում է Համակարգում վերակազմակերպմամբ պայմանավորված կորպորատիվ գործառնության գրանցմամբ:
 - 4.1.3. Թողարկողի վերակազմավորման (երբ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորվում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ տեսակի ընկերության կամ ընկերակցության կամ կոոպերատիվի և այլն) և օրենքով նախատեսված այլ դեպքերում գործընթացն իրականացվում է հետևյալ կարգով 3 աշխատանքային օրվա ընթացքում.
 - Թողարկողը կամ վերջինիս իրավահաջորդը Բանկ է ներկայացնում Անհրաժեշտ փաստաթղթերը և մարում Թողարկողի Բանկի նկատմամբ առկա պարտավորությունները՝ համաձայն Բանկի սակագների,
 - Եթե Թողարկողը այլ արժեթղթերի ռեեստրի վարում չի իրականացնում Բանկի միջնորդությամբ, ապա Բանկը փակում է նաև Թողարկողի արժեթղթերի հաշիվը:
- 4.2. Եթե ռեեստրի վարման պայմանագիրը լուծվում է ոչ թե Թողարկողի վերակազմակերպման, այլ ռեեստրի վարման պայմանագրի առարկա արժեթղթերի դադարման կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում, Բանկը այդ մասին տեղեկացնում է տվյալ Թողարկողի արժեթղթերի այն

սեփականատերերին, որոնց արժեթղթերի հաշիվները սպասարկվում են Բանկի կողմից: Ռեեստրի վարման պայմանագրի լուծման մասին հրապարակվում է նաև Դեպոզիտարիայի կայքում:

- 4.3. Եթե ռեեստրի վարման պայմանագիրը լուծվում է ոչ թե Թողարկողի վերակազմակերպման կամ ռեեստրի վարման պայմանագրի առարկա արժեթղթերի դադարման հիմքով, ապա Բանկը շարունակում է տվյալ արժեթղթերի սեփականատերերին Պայմաններով սահմանված ծառայությունների մատուցումը՝ զգուշացնելով, որ այս պարագայում նշված արժեթղթերով գործառնություններ իրականացնելիս հնարավոր են շեղումներ՝ նշված արժեթղթերի դասին վերաբերող փաստացի և Համակարգում առկա տվյալների միջև:
- 4.4. Ռեեստրի վարման պայմանագրի լուծման դեպքում, Թողարկողը պետք է մարի Բանկի նկատմամբ պարտավորությունները՝ համաձայն Սակագների:

5. Արժեթղթերի հաշվի բացում արժեթղթերի սեփականատիրոջ, թողարկողի համար

- 5.1. Պայմաններով սահմանված արժեթղթերի պահառության ծառայությունները մատուցվում են արժեթղթերի պահառության եռակողմ պայմանագրի հիման վրա:
- 5.2. Բանկի, Դեպոզիտարիայի և Հաշվետիրոջ միջև կնքվում է արժեթղթերի պահառության եռակողմ պայմանագիր և բացվում է արժեթղթերի հաշիվ Հաշվետիրոջ կողմից Անհրաժեշտ փաստաթղթերը Բանկ ներկայացնելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:
- 5.3. Համակարգում Բանկի կողմից կարող են բացվել արժեթղթերի հաշիվների հետևյալ տեսակները.
 - 5.3.1. Սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվ, որը բացվում է անձանց սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը հաշվառելու նպատակով.
 - 5.3.2. Թողարկողի արժեթղթերի հաշիվ, որում հաշվառվում են Թողարկողի տիրապետման տակ գտնվող (այդ թվում՝ ձեռքբերված կամ հետգնված) իր կողմից տեղաբաշխված արժեթղթերը.
 - 5.3.3. Բաժնային սեփականության արժեթղթերի հաշիվը ընդհանուր սեփականության հաշիվ է, որտեղ հաշվառվում են այն արժեթղթերը, որոնք պատկանում են մեկից ավելի անձանց՝ սահմանված բաժնային համամասնության սկզբունքով.
 - 5.3.4. Համատեղ սեփականության արժեթղթերի հաշիվը ընդհանուր սեփականության հաշիվ է, որում հաշվառվում են այն արժեթղթերը, որոնք պատկանում են մեկից ավելի անձանց համատեղ սեփականության իրավունքով:
- 5.4. Բանկը միևնույն անձի համար բացում է նույն տեսակի միայն մեկ հաշիվ, բացառությամբ ընդհանուր սեփականության հաշիվների:
- 5.5. Ընդհանուր (բաժնային կամ համատեղ) սեփականության հաշիվները բացվում են այն դեպքում, երբ միևնույն արժեթղթերը պատկանում են մեկից ավելի անձանց: Բաժնային և համատեղ սեփականության հաշիվները բացելիս պահանջվող տեղեկությունները և Անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են յուրաքանչյուր Հաշվետիրոջ համար:
- 5.6. Եթե արժեթղթերի հաշվի վերաբացման արդյունքում միևնույն Հաճախորդի համար վերաբացվում է միևնույն տեսակի 1-ից ավելի արժեթղթերի հաշիվներ, ապա Բանկը միավորում է այդ հաշիվները՝ պահպանելով Համակարգում արժեթղթերի այն հաշիվը, որը նախընտրում է Հաճախորդը (եթե վերջինս նշում է նախընտրած հաշվի համարը) և 1 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում Հաճախորդին և Դեպոզիտարիային:
- 5.7. Համակարգում Հաշվետիրոջ համար արժեթղթերի հաշիվ կարող է բացվել հետևյալ եղանակներից որևէ մեկով.

- 5.7.1. Արժեթղթերի նոր հաշվի բացում,
- 5.7.2. Դեպոզիտարիայի կողմից բացված և ժամանակավոր հաշվի կարգավիճակ ունեցող արժեթղթերի հաշվի վերաբացում: Ժամանակավոր հաշիվը ռեեստրի վարման պայմանագրի կնքման շրջանակներում թողարկողի կողմից ներկայացված տվյալների (անվանական արժեթղթերի սեփականատերերի և (կամ) անվանատերերի ցուցակի) հիման վրա Դեպոզիտարիայի կողմից Համակարգում բացված արժեթղթերի հաշիվն է, ինչպես նաև Համակարգում բացված կամ վերաբացված արժեթղթերի այն հաշիվը, որի սպասարկման իրավունքը որևէ հաշվի օպերատորի վերապահված չէ և որով գործառնություններ իրականացնելու իրավունքը Դեպոզիտարիայի կանոններով սահմանված դեպքերում և կարգով վերապահվում է միայն Դեպոզիտարիային:
- 5.8. Բանկը արժեթղթերի հաշվի վերաբացման դեպքում (բացառությամբ Ժառանգատուի արժեթղթերի հաշվի) արժեթղթերի հաշվի վերաբացման և Հաշվետիրոջը նույնականացման համար առաջնորդվում է հետևյալ կարգով.
- 5.8.1. Համակարգում ստուգում է Հաճախորդի՝ ժամանակավոր հաշվի կարգավիճակով արժեթղթերի հաշվի առկայությունը: Ստուգվում են հետևյալ տեղեկությունները
- 1) Անունը (այնպես, ինչպես նշված է անձը հաստատող փաստաթղթում)՝ ֆիզիկական անձի դեպքում կամ անվանումը (այնպես, ինչպես նշված է պետական գրանցման փաստաթղթում)՝ իրավաբանական անձի դեպքում.
 - 2) Ազգանունը (այնպես, ինչպես նշված է անձը հաստատող փաստաթղթում)
 - 3) Անձը հաստատող փաստաթղթի համարը և սերիան (սերիան՝ առկայության դեպքում) ֆիզիկական անձանց դեպքում, պետական գրանցումը հավաստող փաստաթղթի կամ պետական գրանցման համարը և սերիան (սերիան՝ առկայության դեպքում) իրավաբանական անձանց դեպքում.
 - 4) Բնակության և/կամ հաշվառման վայրը՝ ֆիզիկական անձանց դեպքում կամ գտնվելու վայրը (փոստային հասցեն) իրավաբանական անձանց դեպքում.
 - 5) Ծննդյան ամսաթիվը՝ ֆիզիկական անձանց դեպքում.
 - 6) Դեպոզիտարիայի կողմից բացված արժեթղթերի ժամանակավոր հաշվի համարը (տեղեկությունների առկայության դեպքում).
 - 7) Հանրային ծառայության համարանիշը (սոցիալական քարտի համարանիշը), կամ, վերջիններիս բացակայության դեպքում՝ դրանց բացակայությունը հավաստող տեղեկանքի համարը՝ ֆիզիկական անձանց դեպքում, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) կամ այլ համարժեք նույնականացնող տարբերանիշը՝ իրավաբանական անձանց դեպքում (տեղեկությունների առկայության դեպքում)
 - 8) Թողարկողի անվանումը, կամ ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն (ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն նշվում է այն դեպքում, երբ հաճախորդը հանդիսանում է կամ նախկինում հանդիսացել է արժեթղթերի սեփականատեր:
 - 9) Հաճախորդին պատկանող արժեթղթերի քանակը (նշվում է այն դեպքում, երբ հաճախորդը հանդիսանում է կամ նախկինում հանդիսացել է արժեթղթերի սեփականատեր):
- 5.8.2. Եթե Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկություններից առնվազն 5-ը համապատասխանում են Համակարգում վերաբացվող արժեթղթերի հաշվում

առկա տեղեկություններին, ապա իրականացվում է Հաճախորդի պատշաճ նույնականացում հետևյալ կարգով.

- Եթե համընկել են միայն 5.8.1. կետի 1-3 կամ նույն կետի 1, 2, 7 և ցանկացած այլ երկու (երեք իրավաբանական անձանց դեպքում) կամ նույն կետի 1, 2, 4, 5, 8, 9 ենթակետերում նշված տեղեկությունները, Հաճախորդը համարվում է նույնականացված: Հաճախորդը համարվում է նույնականացված նաև այն դեպքում, երբ Համակարգում սույն ենթակետում նշված տեղեկությունների փոխարեն համընկել են համապատասխան նույնականացնող տեղեկությունները, որոնք նշված են տվյալ տեղեկությունների պաշտոնական հաշվառում իրականացնելու իրավասություն ունեցող պետական մարմնի կողմից տրված համապատասխան փաստաթղթում կամ դատարանի որոշման մեջ՝ ֆիզիկական անձի դեպքում, կամ պետական գրանցում իրականացրած մարմնի կողմից տրված համապատասխան տեղեկանքում կամ դատարանի որոշման մեջ՝ իրավաբանական անձի դեպքում:

- Եթե համընկել են միայն 5.8.1. կետի 1, 2, 8, 9 և այլ, բայց ոչ՝ 3 կամ 7 ենթակետերում նշված տեղեկությունները, կամ համընկել են 3, 8, 9 և երկու այլ ենթակետերով սահմանված տեղեկությունները, սակայն չեն համընկել 1 և (կամ) 2 ենթակետերով սահմանված տեղեկությունները, նույնականացումը իրականացվում է միայն Թողարկողի (թողարկողների) կողմից Հաճախորդին տվյալ արժեթղթերի սեփականատեր ճանաչելու պատշաճ հավաստիացված տեղեկանքի (տեղեկանքների) կամ դատարանի որոշման հիման վրա:

- Եթե համընկել են տեղեկություններից այնպիսի 5-ը, որոնք չեն ներառում 5.8.1. կետի 1-3 և 7 ենթակետերում նշված տեղեկություններից որևէ մեկը, հաճախորդը համարվում է չնույնականացված:

5.8.3. Բանկը Հաճախորդին չնույնականացնելու դեպքում 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է վերջինիս:

5.8.4. Հաճախորդը իրավունք ունի 15 աշխատանքային օրվա ընթացքում համալրել ներկայացված փաստաթղթերը:

5.9. Ժառանգատուի նույնականացումը իրականացվում է Ժառանգի (իրավահաջորդի) դիմումի, Ժառանգության վկայականի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև Թողարկողի կողմից տրված տեղեկանքի, նոտարի կողմից լրացուցիչ պարզաբանող փաստաթղթերի և տեղեկությունների կամ նոտարական հարցման պատասխանի հիման վրա՝ հաշվի առնելով 5.8.2 կետով սահմանված սկզբունքները:

5.10. Բանկը Ժառանգատուի արժեթղթերի հաշվի բացման համար արժեթղթերի պահառության պայմանագիր չի կնքում: Ժառանգատուի արժեթղթերի հաշիվը Բանկի կողմից վերաբացվում է այն դեպքում, երբ պետք է իրականացվի Ժառանգության գրանցման արդյունքում արժեթղթերի փոխանցում Ժառանգի (իրավահաջորդի) արժեթղթերի հաշվին:

5.11. Բանկի միջնորդությամբ Հաշվետերերին մատուցվում են Արժեթղթերի պահառությամբ պայմանավորված հետևյալ ծառայությունները.

5.11.1. Արժեթղթերի փոխանցմամբ՝ այդ թվում նաև արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացմամբ պայմանավորված գործառնությունների գրանցում.

5.11.2. Արժեթղթերի գրավադրմամբ պայմանավորված գործառնությունների գրանցում.

- 5.11.3. Արժեթղթերի գրավադրման դադարեցման գրանցում.
- 5.11.4. Արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցման և դրա դադարեցման գրանցում.
- 5.11.5. Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում գրավադրված արժեթղթերի համար քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակման և դրա դադարեցման գրանցում.
- 5.11.6. Պետական պարտատոմսերի պահառությամբ պայմանավորված գործառնությունների գրանցում.
- 5.11.7. Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի ենթապահառությամբ պայմանավորված գործառնությունների գրանցում.
- 5.11.8. Արժեթղթերի հաշվի սվյալների փոփոխության գրանցում
- 5.11.9. Համակարգից տեղեկությունների տրամադրում:

6. Արժեթղթերի հաշվի փակում, արժեթղթերի պահառության պայմանագրի լուծում

- 6.1. Բանկը արժեթղթերի հաշիվը փակում է Հաշվետիրոջ հանձնարարականի հիման վրա, բացառությամբ Թողարկողի արժեթղթերի հաշվի փակման, որը Բանկի կողմից փակվում է, երբ Թողարկողի անվանական արժեթղթերի ռեեստրի վարումը դադարում է իրականացվել Բանկի միջնորդությամբ:
- 6.2. Բանկը արժեթղթերի հաշիվը փակում է Հաշվետիրոջ կողմից ներկայացված արժեթղթերի հաշվի փակման հանձնարարականի հիման վրա: Հանձնարարականի ընդունումը Բանկի կողմից համարվում է Բանկի և Հաճախորդի միջև համաձայնություն պահառության պայմանագրի լուծման համար: Ընդ որում, պետական պարտատոմսերի դեպք հաշվի փակման դեպքում հանձնարարականը պետք է ներկայացվի հանձնարարականում նշված՝ հաշվի փակման օրվանից առնվազն 20 աշխատանքային օր առաջ:
- 6.3. Բանկը անմիջապես փակում է արժեթղթերի հաշիվը Անհրաժեշտ փաստաթղթերը Հաճախորդից ստանալուց հետո: Արժեթղթերի հաշվի փակումը իրականացվում է արժեթղթերի պահառության պայմանագրի լուծման արդյունքում:
- 6.4. Արժեթղթերի պահառության պայմանագիրը լուծվում է, եթե Հաշվետերը կատարել է Սակագներով սահմանված բոլոր պարտավորությունները, և արժեթղթերի հաշվի մնացորդը գրոյական է:

7. Արժեթղթերի գրավադրում և գրավադրված արժեթղթերով քվեարկելու իրավունքի սահմանափակում

- 7.1. Գրավադրման գործառնությունը Համակարգում գրանցվում և Բանկը տեղեկացնում է այդ մասին գրավատու Հաճախորդին Անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ հետևյալ կարգով.
 - 7.1.1. Գրավատու կողմի արժեթղթերի հաշիվը Համակարգում պետք է ունենա ակտիվ հաշվի կարգավիճակ :
 - 7.1.2. Եթե Բանկի կողմից սպասարկվում է միայն Գրավատու կողմի արժեթղթերի հաշիվը, Բանկը Համակարգում այլ հաշվի օպերատորի կողմից գրավի գրանցման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է այդ մասին Գրավատու հանդիսացող Հաճախորդին:

- 7.1.3. Եթե Բանկի կողմից սպասարկվում է միայն Գրավատու կողմի արժեթղթերի հաշիվը, Բանկը Գրավատուի կողմից ներկայացված Անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա Համակարգում գրանցում է գրավը:
- 7.1.4. Արժեթղթերի գրավառուի փոփոխության, ինչպես նաև գրավի իրավունքի գրավադրման դեպքում, Բանկը գրավի իրավունքի գրանցումը նոր գրավառուի օգտին իրականացնում է Համակարգում տվյալ պահին գրանցված Գրավառուի կողմից ներկայացված Անհրաժեշտ փաստաթղթերի (կամ վերջինիս համաձայնության դեպքում՝ գրավատուի կողմից ներկայացված Անհրաժեշտ փաստաթղթերի) հիման վրա:
- 7.2. Բանկը Գրավատուի հանձնարարականի համաձայն գրանցում է նաև գրավադրված արժեթղթերի համար Թողարկողի Ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի (այսուհետ քվեարկելու իրավունք) ժամանակավոր սահմանափակում:
- 7.3. Քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակման գրանցման հանձնարարականը Գրավատուն կարող է ներկայացնել ինչպես արժեթղթերի գրավադրման գրանցման համար դիմելիս, այնպես էլ արժեթղթերի գրավադրումից հետո, և վերջին դեպքում անհրաժեշտ է գրավառուի գրավոր համաձայնությունը:
- 7.4. Արժեթղթերի հաջորդող գրավով պայմանավորված գործառնությունը Համակարգում գրանցվում է, եթե այն արգելված չէ գրավադրվող արժեթղթերի թողարկման պայմաններով և/կամ արժեթղթերի գրանցման հայտարարագրով:
- 7.5. Համակարգում գրավադրված արժեթղթերով կորպորատիվ գործառնության իրականացման դեպքում գրավի իրավունքը պահպանվում է կորպորատիվ գործառնության արդյունքում գրանցված արժեթղթերի նկատմամբ:

8. Արժեթղթերի գրավադրման դադարեցում և քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակման դադարեցում

- 8.1. Բանկը արժեթղթերի գրավը դադարեցնում է Համակարգում.
 - 8.1.1. Արժեթղթերի գրավադրման ժամկետի ավարտի դեպքում հանձնարարականի հիմքով,
 - 8.1.2. Գրավառուի հանձնարարությամբ/ համաձայնությամբ և/կամ վերջին պայմանի ապահովմամբ՝ այլ շահագրգիռ անձի նախաձեռնությամբ,
 - 8.1.3. Օրենքով և/կամ սույն պայմաններով սահմանված այլ դեպքերում:
- 8.2. Արժեթղթերի գրավադրման դադարեցման համար.
 - 8.2.1. Բանկ պետք է ներկայացվեն Անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կարող են ներկայացնել ինչպես արժեթղթերի գրավադրման գործառնության Գրավառու, այնպես էլ Գրավատու կողմը (կամ վերջինիս հաշվի օպերատորը, երբ Գրավատուին սպասարկում է այլ հաշվի օպերատոր), ընդ որում Գրավատու կողմի կամ վերջինիս հաշվի օպերատորի հանդես գալու դեպքում Բանկ է ներկայացվում նաև Գրավառուի գրավոր համաձայնությունը, ինչպես նաև Անհրաժեշտ փաստաթղթերը, կամ
 - 8.2.2. Պետական լիազոր մարմինը կամ այլ շահագրգիռ անձը Բանկ է ներկայացնում արժեթղթերի գրավադրման դադարեցման վերաբերյալ Դատարանի, Դատական ակտերի հարկադիր կատարողի կամ ՀՀ օրենսդրությամբ նման իրավասություն ունեցող մարմնի որոշումը:
- 8.3. Բանկը գրավադրումը դադարեցնում է Համակարգում Անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում արժեթղթերի գրավադրման

դադարեցմամբ Համակարգում դադարեցվում է նաև գրավադրված արժեթղթերի քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակումը:

- 8.4. Եթե քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակման դադարեցման հանձնարարականը Հաճախորդը Բանկ է ներկայացնում մինչև գրավադրված արժեթղթերի գրավադրման դադարեցումը, ապա Բանկ պետք է ներկայացվի նաև գրավառուի գրավոր համաձայնությունը:
- 8.5. Բանկը գրավադրման դադարեցման մասին անմիջապես տեղեկացնում է Հաճախորդին, իսկ եթե Գրավատու կողմը սպասարկվում է այլ հաշվի օպերատորի կողմից՝ նաև այդ մասին տեղեկացնում է Գրավատուի հաշվի օպերատորին:
- 8.6. Գրավադրումը Համակարգում առանց Բանկի կամ այլ հաշվի օպերատորի գործողության դադարեցվում է, եթե
 - 8.6.1. Գրավի առարկա հանդիսացող՝ տվյալ դասի արժեթղթերը Համակարգում չեղարկվել կամ մարվել են (բացառությամբ կորպորատիվ գործողության հետևանքով արժեթղթերի մարման դեպքերի)
 - 8.6.2. Տվյալ դասի արժեթղթերով կորպորատիվ գործողության արդյունքում առաջացող գույքի նկատմամբ գրավի իրավունքի գրանցումը Դեպոզիտարիայի իրավասությունների շրջանակում չէ:

9. Արժեթղթերի փոխանցում

- 9.1. Պայմանները սահմանում են արժեթղթերի փոխանցման այն գործառնությունները, որոնք չեն հանդիսանում Կարգավորվող շուկայում կնքված գործարքի արդյունք :
- 9.2. Բանկը արժեթղթերի փոխանցման գործառնություն գրանցում է համակարգում, եթե արժեթղթեր փոխանցող և ստացող կողմ հանդիսացող Հաշվետերերի հաշիվներն ունեն ակտիվ հաշվի կարգավիճակ, բացառությամբ Դեպոզիտարիայի կանոններով և Պայմաններով սահմանված դեպքերի:
- 9.3. Բանկը արժեթղթերի փոխանցումը Համակարգում իրականացնում է հետևյալ տեսակներով.
 - 9.3.1. Ազատ առաքում կամ ST փոխանցում՝ արժեթղթերի փոխանցում առանց գործարքի հանդիպակաց կողմի համաձայնության,
 - 9.3.2. Առաքում վճարման դիմաց կամ DVP փոխանցում՝ արժեթղթերի փոխանցում վճարման դիմաց,
 - 9.3.3. Ազատ առաքում՝ համաձայնությամբ կամ FOP փոխանցում՝ ազատ առաքման եղանակով արժեթղթերի փոխանցում՝ գործարքի հանդիպակաց կողմի համաձայնությամբ,
 - 9.3.4. Արժեթղթերի պորտֆելի (արժեթղթերի հաշվին առկա ամբողջ մնացորդի) փոխանցում,
 - 9.3.5. Կենտրոնական բանկի և ֆինանսական կազմակերպությունների միջև կնքված ռեպո պայմանագրից բխող արժեթղթերի փոխանցում:
- 9.4. Բանկը Համակարգում արժեթղթերի փոխանցում իրականացնում է.
 - 9.4.1. Արժեթղթերի սեփականատիրիոջ Հանձնարարականի հիմքով,
 - 9.4.2. Արժեթղթերի ժառանգի կամ արժեթղթերի Գրավառուի հանձնարարականի հիմքով համապատասխանաբար ժառանգության իրավունքի գրանցման կամ արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման դեպքում,

- 9.4.3. Դեպոզիտարիայի հանձնարարության հիմքով, երբ Թողարկողի արժեթղթերի հաշվի պորտֆելը փոխանցվում է Թողարկողի՝ այլ հաշվի օպերատորի մոտ բացված արժեթղթերի հաշվին՝ հաշվի օպերատորի փոփոխության դեպքում:
- 9.4.4. Օրենքով նախատեսված այլ հիմքերի դեպքերում՝ պետական լիազոր մարմնի կամ այլ շահագրգիռ կողմի նախաձեռնությամբ, երբ պետական լիազոր մարմինը կամ այլ շահագրգիռ կողմը Բանկ է ներկայացնում արժեթղթերի փոխանցման վերաբերյալ Դատարանի, Դատական ակտերի հարկադիր կատարողի կամ ՀՀ օրենսդրությամբ նման իրավասություն ունեցող մարմնի որոշումը:
- 9.5. Բանկի կողմից արժեթղթերի փոխանցումը Համակարգում իրականացվում է Անհրաժեշտ փաստաթղթերի և/կամ պայմանների ապահովման և հիմքերի առկայության դեպքում հետևյալ ժամկետներում.
- 9.5.1. 3 աշխատանքային օր՝ ազատ առաքմամբ փոխանցման, FOP, DVP փոխանցումների համար,
- 9.5.2. 1 աշխատանքային օր՝ պորտֆելի փոխանցման և REPO փոխանցման համար,
- 9.5.3. 5 աշխատանքային օր, եթե արժեթղթերի փոխանցման հիմքը գրավի արտադատական կարգով իրացումն է:
- 9.6. Բանկի կողմից կատարված DVP, FOP և արժեթղթերի պորտֆելի փոխանցմամբ արժեթղթերի փոխանցման գործարքները գրանցվում են Համակարգում գործարքի մյուս կողմին սպասարկող հաշվի օպերատորի հաստատմամբ:
- 9.7. Բանկը DVP փոխանցման հանձնարարականը Համակարգում կատարում է հանձնարարականում նշված վերջնահաշվարկի օրը, եթե Հաճախորդը Անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացրել է վերջնահաշվարկի օրվա մինչև ժամը 15:00-ը, ընդ որում եթե DVP հանձնարարականը ներկայացվել է արժեթղթերի գնորդի կողմից, վերջինս պետք է ապահովի գործարքի համար անհրաժեշտ գումարը Բանկի՝ դրամական վերջնահաշվարկի համար նախատեսված հաշվին վերջնահաշվարկի օրվա դրությամբ:
- 9.8. Դեպոզիտարիայի «Ներդրումային ֆոնդերի թողարկած փայերի ադմինիստրավորման ծառայությունների մատուցման» կանոններով սահմանված դեպքերում Բանկը կատարում է Հաճախորդի կողմից ներկայացված փայերի բաժանորդագրման և մարման հայտը, եթե Հաճախորդը Անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացրել է Բանկ վերջնահաշվարկի օրվա նախորդ օրը մինչև ժամը 15:00-ն և փայերի բաժանորդագրման դեպքում ապահովել է գործարքի համար անհրաժեշտ գումարը Բանկի՝ դրամական վերջնահաշվարկի համար նախատեսված հաշվին վերջնահաշվարկի օրվա դրությամբ:
- 9.9. Բանկը Թողարկողի կողմից տեղաբաշխված արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման հիմքով Թողարկողի արժեթղթերի հաշվին արժեթղթերի փոխանցումները Համակարգում իրականացնում է ազատ առաքում՝ համաձայնությամբ (FOP փոխանցում) կամ առաքում վճարման դիմաց (DVP փոխանցում) տեսակներով:
- 9.10. Արժեթղթերի նվիրատվությունը (նվիրաբերությունը) Համակարգում կատարվում է ազատ առաքում համաձայնությամբ (FOP փոխանցում) գործառնության միջոցով, իսկ նվիրատվության պայմանագրի առկայության դեպքում՝ կարող է իրականացվել նաև ազատ առաքման (ST փոխանցում) գործառնության միջոցով:
- 9.11. Բանկը արժեթղթերի պորտֆելի փոխանցում Համակարգում իրականացնում է.

- 9.11.1. Հաշվետիրոջ հանձնարարականի հիման վրա, երբ Հաշվետերը Բանկի կողմից սպասարկվող արժեթղթերի հաշվում առկա իր բոլոր արժեթղթերը փոխանցում է այլ հաշվի օպերատորի կողմից սպասարկվող իր արժեթղթերի հաշվին.
- 9.11.2. Դեպոզիտարիայի Կանոններով նախատեսված այլ դեպք/եր/ում:
- 9.12. Բանկը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան որոշումը և շահագրգիռ կողմի դիմումի ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Դեպոզիտարիա կատարման, եթե դատարանի վճռի հիման վրա փոխանցող կողմ հանդիսացող Հաշվետիրոջ արժեթղթերի հաշիվը չի սպասարկվում Բանկի միջնորդությամբ, կամ տվյալ վճռով պատասխանող կողմ է հանդիսանում Դեպոզիտարիան կամ Բանկին ներկայացված չէ ստացող կողմի ակտիվ հաշվի կարգավիճակով արժեթղթերի հաշվի համարը, որի դեպքում տվյալ գործառնության իրականացումը ապահովվում է Դեպոզիտարիայի կողմից:
- 9.13. Բանկը Համակարգում կատարում է արժեթղթերի փոխանցման գործառնությունը, եթե արժեթղթերի փոխանցման հանձնարարականով ներկայացված տեղեկությունները համապատասխանում են փոխանցող և ստացող կողմերի վերաբերյալ Համակարգում առկա և Բանկին հասանելի տեղեկությունների հետ:
- 9.14. Բանկ ներկայացված՝ արժեթղթերի փոխանցման հանձնարարականը փոփոխման կամ հետկանչման ենթակա չէ այն պահից սկսած (փոխանցման հանձնարարականի անվերադարձելիության պահ), երբ Համակարգում արժեթղթերը փաստացի փոխանցված են: Ընդ որում, DVP և FOP փոխանցումների դեպքում արժեթղթերի փոխանցման հանձնարարականը կարող է հետ կանչվել կամ միակողմանիորեն փոփոխվել մինչև հանդիպակաց կողմի հանձնարարականի հետ համընկման պահը, իսկ դրանից հետո՝ կարող են փոփոխվել մինչև վերջնահաշվարկը՝ երկու կողմերի համաձայնությամբ:
- 9.15. «Ռեպո, հակադարձ ռեպո և ռեպո պայմանագրի խզում» գործարքներից բխող արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված գործառնությունների գրանցումները և ժամկետները Համակարգում կարգավորվում են համապատասխան պայմանագրերով: Ռեպո, հակադարձ ռեպո գործարքներից բխող արժեթղթերի փոխանցումը կարող է իրականացվել երկու եղանակներով՝ Հաշվետիրոջ կողմից հանձնարարականը Բանկ-մեյլ համակարգով Դեպոզիտարիա կամ Պայմաններով սահմանված կարգով Բանկ ներկայացնելու միջոցով:
- 9.16. Հակադարձ ռեպո կամ ռեպո զամբյուղից արժեթղթերի հետ փոխանցման գործառնության դեպքում արժեթղթերի փոխանցող կողմ է հանդիսանում ՀՀ Կենտրոնական բանկը:
- 9.17. Ռեպո պայմանագրի լուծմամբ պայմանավորված արժեթղթերի փոխանցման նպատակով ՀՀ Կենտրոնական բանկը համապատասխան հանձնարարական է ներկայացնում Դեպոզիտարիա, որն իրականացնում է գործառնության հետագա ընթացքը:

10. Համակարգից տեղեկությունների տրամադրում

- 10.1. Բանկը Պայմանների սույն գլխով սահմանված տեղեկությունները տրամադրում է միայն այդ տեղեկությունները ստանալու իրավունք ունեցող անձանց, այդ թվում՝ այն լիազորված ներկայացուցիչներին, որոնց լիազորությունների գործողության մեջ լինելու փաստի մասին առկա են համապատասխան տեղեկություններ Համակարգում կամ ներկայացված այլ փաստաթղթերում:

- 10.2. Հաճախորդի հարցումը կարող է ներկայացվել Բանկ, իսկ հարցման պատասխանը՝ Բանկի կողմից տրամադրվել հաճախորդին ինչպես առձեռն, այնպես էլ էլեկտրոնային եղանակով՝ նրա հետ համաձայնեցված և Բանկում գործող հեռակառավարման համակարգերով:
- 10.3. Բանկի կողմից Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի վերաբերյալ քաղվածքները, տեղեկանքները և հաշվետվությունները հաճախորդին տրամադրվում են Պայմանների սույն գլխի համաձայն, իսկ այն տեղեկությունները, որոնք ստացվում են օտարերկրյա պահառուի համակարգով, հաճախորդի հարցման հիման վրա տրամադրվում են Դեպոզիտարիայի կողմից Բանկի միջնորդությամբ:
- 10.4. Բանկը Համակարգից տեղեկություններ տրամադրում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերով և կարգով: Համակարգից տեղեկությունները տրամադրվում են Հաճախորդի հարցման մեջ նշված ժամանակահատվածի համար, որը չի գերազանցում Դեպոզիտարիայի հետ ռեեստրի վարման պայմանագրային հարաբերությունների ժամանակահատվածը կամ որը չի գերազանցում և ներառում է գործառնության առարկա հանդիսացած արժեթղթերի վերաբերյալ Համակարգում տեղեկությունների առկայության ժամանակահատվածը:
- 10.5. Համակարգից տեղեկություններ ստանալու համար Բանկ կարող են հարցում ներկայացնել.
- 10.5.1. Թողարկողը, որը կարող է ներկայացնել հետևյալ հարցումները.
- Հարցում անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի (այսուհետ այս գլխում նաև՝ Ցուցակ) վերաբերյալ.
 - Հարցում թողարկված և տեղաբաշխված արժեթղթերով որոշակի ժամանակահատվածում կատարված գործառնությունների վերաբերյալ: Ընդ որում, Բանկը Թողարկողին տրամադրում է արժեթղթերի փոխանցումների մասին տեղեկատվություն/տեղեկանք՝ առանց գործառնության հիմք հանդիսացող փաստաթղթերի: Բանկը չի տրամադրում Թողարկողին վերջինիս կողմից թողարկված արժեթղթերի գրավադրման մասին տեղեկություններ:
- 10.5.2. Արժեթղթերի սեփականատերը, որը կարող է ներկայացնել հետևյալ հարցումները.
- Հարցում արժեթղթերի հաշվի քաղվածքի վերաբերյալ: Ընդ որում, քաղվածքը պետք է ներառի տեղեկություններ արժեթղթերի հաշվում առկա միայն մեկ դասի կամ տեսակի արժեթղթի մասին.
 - Հարցում արժեթղթերի հաշվի մնացորդի հաշվետվության վերաբերյալ: Ընդ որում, հաշվետվությունը պետք է ներառի տեղեկություններ արժեթղթերի հաշվում առկա բոլոր արժեթղթերի մասին.
 - Հարցում արժեթղթերի հաշվով որոշակի ժամանակահատվածում կատարված գործառնությունների վերաբերյալ.
 - Հարցում արժեթղթերի հաշվում գրանցված գրավի իրավունքի վերաբերյալ:
 - Հարցում Հաշվետիրոջ կողմից կանոնադրական կապիտալում կատարված ներդրման մասին:
- 10.5.3. Արժեթղթերի սեփականատեր չհանդիսացող, ինչպես նաև արժեթղթերի նկատմամբ գրավի կամ այլ իրավունքներ ունեցող (ունեցած) անձինք՝ իրենց համար Ծառայողական գաղտնիք չհամարվող տեղեկությունների մասին հարցումներ, եթե Բանկը տիրապետում է նշված տեղեկությանը:
- 10.5.4. Նոտարը, ՀՀ Կենտրոնական բանկը, պետական իրավասու այլ մարմին, օրենքով սահմանված այլ իրավասու անձինք:

- 10.6. Բանկը Հաշվետիրոջ արժեթղթերի հաշվի բացման (վերաբացման) արդյունքում անմիջապես այդ մասին անվճար ծանուցում (տեղեկացում) է Հաշվետիրոջը:
- 10.7. **Արժեթղթերի հաշվից քաղվածքը**, ինչպես նաև արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ հաշվետվությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները.
- 10.7.1. Արժեթղթերի հաշվի համար.
- 10.7.2. Հաշվետիրոջ անուն, ազգանուն, անձնագրի սերիա (առկայության դեպքում) և համար, բնակության և/կամ հաշվառման հասցե՝ ֆիզիկական անձի դեպքում և անվանում, հարկ վճարողի հաշվառման համարը կամ համապատասխան պետական մարմնի կողմից տրված նույնականացման այլ համարը, գտնվելու վայրը (փոստային հասցեն)՝ իրավաբանական անձի դեպքում.
- 10.7.3. Արժեթղթերի հաշվում հաշվառվող արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը և քանակը, բաժնեմասը՝ տոկոսներով, անվանական արժեքը և արժույթը.
- 10.7.4. Գրավադրված կամ սառեցված արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (դրա բացակայության դեպքում՝ արժեթղթերի դասը) և քանակը.
- 10.7.5. Թողարկողի և Թողարկողի արժեթղթերի վերաբերյալ ընդհանրացված տեղեկություններ.
- 10.7.6. Քաղվածքի (հաշվետվության) կազմման ամսաթիվը և ժամը.
- 10.7.7. Ամսաթիվ, որի դրությամբ ներկայացված են քաղվածքում կամ հաշվետվությունում ներառված տեղեկությունները:
- 10.8. **Արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունը** պարունակում է հետևյալ տեղեկությունները.
- 10.8.1. Արժեթղթերի հաշվի համար.
- 10.8.2. Հաշվետիրոջ անուն, ազգանուն, անձնագրի սերիա (առկայության դեպքում) և համար, բնակության և/կամ հաշվառման հասցե՝ ֆիզիկական անձի դեպքում և անվանում, հարկ վճարողի հաշվառման համարը կամ համապատասխան պետական մարմնի կողմից տրված նույնականացման այլ համարը, գտնվելու վայրը (փոստային հասցեն)՝ իրավաբանական անձի դեպքում.
- 10.8.3. Հարցման մեջ նշված ժամանակահատվածում արժեթղթերի հաշվով կատարված հարցմամբ պահանջվող գործառնությունները՝ նշելով յուրաքանչյուր գործառնության գրանցման ամսաթիվը և հակիրճ բովանդակությունը.
- 10.8.4. Հաշվետվության կազմման ամսաթիվը և ժամը.
- 10.8.5. Ժամանակահատվածը, որի համար ներկայացվում է հաշվետվությունը.
- 10.8.6. Գործարքի առարկա արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը և քանակը, անվանական արժեքը և արժույթը (եթե հարցմամբ պահանջվող գործառնությունը հանգեցրել է արժեթղթերի մնացորդի հետ կապված որևէ տեղեկության փոփոխության):
- 10.9. Բանկը Հաշվետիրոջը տարեկան մեկ անգամ անվճար, ոչ ուշ, քան մինչև հաջորդ տարվա հունվարի 31-ը, էլեկտրոնային եղանակով տրամադրում է հաշվետու տարվա վերջին օրվա դրությամբ իր արժեթղթերի հաշվի մնացորդի, ինչպես նաև իր արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ հաշվետվություն, եթե հաշվետերը նման տեղեկության ստացման գրավոր (թղթային կամ էլեկտրոնային) պահանջ է ներկայացրել, և տրամադրել է համապատասխան էլեկտրոնային փոստի հասցե:

- 10.10. Բանկը հարցումներին պատասխանում է Անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Ցուցակի, քաղվածքի , տեղեկանքի հարցման դեպքում, 3 աշխատանքային օրվա ընթացքում՝, նոտարական հարցման դեպքում:
- 10.11. Բանկը նոտարական հարցմանը պատասխանում է այն դեպքում, երբ Դեպոզիտարիայի կողմից այն վերահասցեագրվել է Բանկին, քանի որ հարցմամբ պահանջվող տեղեկությունները վերաբերվում են Հաշվետիրոջը, որի արժեթղթերի հաշվի օպերատորն է հանդիսանում Բանկը: Եթե Դեպոզիտարիան նոտարական հարցումը ստացել է Բանկի միջնորդությամբ, ապա Դեպոզիտարիան կարող է նոտարական հարցման պատասխանը նույնպես տրամադրել Բանկի միջնորդությամբ:

11. Համակարգում տվյալների փոփոխում

- 11.1. Բանկը Համակարգում տվյալների փոփոխություն իրականացնում է հետևյալ դեպքերում տվյալների փոփոխման համար Անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացմամբ
- 11.1.1. Թողարկողի հանձնարարությամբ՝
- Թողարկողի կողմից լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու, սնանկացման գործընթացը դադարեցնելու մասին տեղեկությունը գրանցելու համար,
 - Թողարկողի անվան, պետական գրանցման տեղեկությունների, գրանցման հասցեի կամ գտնվելու վայրի, կոնտակտային տվյալների, լիազորված անձանց կամ վերջիններիս տվյալների փոփոխությունը գրանցելու համար,
 - Թողարկողի արժեթղթերի վերաբերյալ Համակարգում առկա տեղեկությունների փոփոխությունը գրանցելու համար, որը պայմանավորված չէ արժեթղթերի դասի փոփոխությամբ կամ կորպորատիվ կամ արժեթղթերի տեղաբաշխման գործառնությամբ,
 - ռեեստրի վարման շրջանակներում Դեպոզիտարիային ներկայացված տեղեկություններում անճշտությունների կամ թերությունների փոփոխման համար,
 - արժեթղթերի սեփականատերերի և (կամ) անվանատերերի ժամանակավոր կամ նույնականացման ենթակա հաշիվների վերաբերյալ թողարկողին հայտնի դարձած արդիական կամ ուղղված տեղեկությունները գրանցելու համար, որը չի հանգեցնում արժեթղթերի սեփականատիրոջը և (կամ) անվանատիրոջը պատկանող արժեթղթերի քանակի, գույքային իրավունքների կամ սահմանափակումների անհիմն փոփոխության:
- 11.1.2. Անվանական արժեթղթերի սեփականատիրոջ կամ գրավառուի հանձնարարությամբ՝ արժեթղթերի հաշվում (գրավառուի դեպքում՝ գրավային հաշվում) տեղեկությունների փոփոխման համար, որոնք չեն հանգեցնում արժեթղթերի սեփականատիրոջը պատկանող արժեթղթերի քանակի, գույքային իրավունքների կամ սահմանափակումների փոփոխության:
- 11.2. Հաշվետիրոջ կողմից արժեթղթերի իր հաշվում ամրագրված տեղեկությունների փոփոխությունները Պայմաններով սահմանված կարգով չներկայացնելու դեպքում Բանկը (Դեպոզիտարիան) պատասխանատվություն չի կրում Հաշվետիրոջը պատճառված վնասի համար:
- 11.3. Բանկի միջնորդությամբ Համակարգում չեն գրանցվում ռեեստրի վարման շրջանակներում Թողարկողի կողմից ներկայացված տեղեկատվության այն փոփոխությունները, որոնք բավարար հիմնավորված չեն կամ Բանկը (Դեպոզիտարիան) ունի հիմնավոր կասկածներ այն մասին, որ տեղեկատվության ուղղումը կամ թարմացումը կարող է հանգեցնել Հաշվետիրոջ, նրան պատկանող արժեթղթերի քանակի կամ նշված արժեթղթերի նկատմամբ երրորդ անձանց

գույքային իրավունքների անհիմն փոփոխությանը կամ այդ և արժեթղթերով հավաստված իրավունքների իրականացման անհիմն սահմանափակմանը:

- 11.4. Թողարկողի նախաձեռնությամբ Ռեեստրի վարման շրջանակներում Բանկին ներկայացված տեղեկություններում անճշտությունների կամ թերությունների (բացթողումների) ուղղումները Համակարգում գրանցելու համար Թողարկողը պետք է վճարի Սակագներով սահմանված վճարները:
- 11.5. Համակարգում տվյալների փոփոխումը իրականացվում է տվյալների փոփոխման համար Անհրաժեշտ փաստաթղթերը հաճախորդի կողմից Բանկ ներկայացնելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխանաբար Բանկի կամ Դեպոզիտարիայի միջոցով Համակարգում գրանցում կատարելով:

12. Տեղեկությունների հրապարակում Դեպոզիտարիայի պաշտոնական կայքում

- 12.1. Թողարկողը Դեպոզիտարիայի պաշտոնական կայքում տեղեկությունների հրապարակման համար պետք է Բանկ ներկայացնի տեղեկությունների հրապարակման դիմում:
- 12.2. Բանկը տեղեկությունների հրապարակման դիմումը ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Դեպոզիտարիա հրապարակման:
- 12.3. Թողարկողը Բանկ է դիմում հետևյալ հայտարարությունների հրապարակման համար.
 - 12.3.1. Հայտարարություն արժեթղթերի (այդ թվում լրացուցիչ թողարկված) գրանցման վերաբերյալ, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները.
 - Թողարկողի ֆիրմային անվանումը, ՀՎՀՀ կամ պետական գրանցման վերաբերյալ այլ տեղեկություն, գտնվելու վայրը և փոստային հասցեն, գործառնության նկարագրությունը, գործառնության կատարման ամսաթիվը (հնարավորության դեպքում),
 - ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն,
 - Գրանցված արժեթղթի տեսակը (դասը),
 - Արժեթղթերի անվանական արժեքը (առկայության դեպքում) և արժույթը,
 - Արժեթղթերի քանակը:
 - 12.3.2. Հայտարարություն արժեթղթերի անվանական արժեքի փոփոխման վերաբերյալ, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները.
 - Թողարկողի ֆիրմային անվանումը, ՀՎՀՀ կամ պետական գրանցման վերաբերյալ այլ տեղեկություն, գտնվելու վայրը և փոստային հասցեն, գործառնության նկարագրությունը, գործառնության կատարման ամսաթիվը (հնարավորության դեպքում),
 - ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն,
 - Արժեթղթերի նախկին և նոր անվանական արժեքները:
 - 12.3.3. Հայտարարություն արժեթղթերի փոխարկման վերաբերյալ, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները.
 - Թողարկողի ֆիրմային անվանումը, ՀՎՀՀ կամ պետական գրանցման վերաբերյալ այլ տեղեկություն, գտնվելու վայրը և փոստային հասցեն, գործառնության նկարագրությունը, գործառնության կատարման ամսաթիվը (հնարավորության դեպքում),
 - Փոխարկվող արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն,
 - Այն արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն, որոնց փոխարկվում են արժեթղթերը, եթե դրանք գրանցված են Համակարգում,

- Սույն ենթակետի 2-րդ կետում նշված արժեթղթերի Թողարկողի անվանումը, եթե Թողարկողը Փոխարկվող արժեթղթի թողարկողը չէ,
 - Փոխարկման գործակիցը:
- 12.3.4. Հայտարարություն արժեթղթերի չեղարկման վերաբերյալ, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները.
- Թողարկողի ֆիրմային անվանումը, ՀՎՀՀ կամ պետական գրանցման վերաբերյալ այլ տեղեկություն, գտնվելու վայրը և փոստային հասցեն, գործառնության նկարագրությունը, գործառնության կատարման ամսաթիվը (հնարավորության դեպքում)
 - Չեղարկվող արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
 - Չեղարկվող արժեթղթերի քանակը:

13. Արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցում և սառեցման դադարեցում

- 13.1. Արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցումը Հաշվետիրոջ կամ նրա լիազոր ներկայացուցիչի կողմից իրականացվում է, որպես իր՝ սեփականատիրոջ արժեթղթերի հաշվով կամ արժեթղթերի հաշվում առկա որևէ դասի և քանակի արժեթղթով(երով) գործառնությունների իրականացման արգելք (սահմանափակում):
- 13.2. Բանկը արժեթղթերի (արժեթղթերի հաշվի) սառեցում կամ սառեցման դադարեցում Համակարգում իրականացնում է Հաճախորդից կամ Ժառանգից ստացված Անհրաժեշտ փաստաթղթերի կամ դատարանի որոշման հիման վրա՝ այն ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- 13.3. Արժեթղթերի (արժեթղթերի հաշվի) սառեցման դադարեցումը կատարվում է Հաշվետիրոջ համապատասխան հանձնարարականի հիման վրա կամ Հաշվետիրոջ հետ կնքված պահառության պայմանագրի լուծման, Ժառանգության գրանցման և սառեցված արժեթղթերով դատարանի որոշմամբ նախատեսված գործառնությունն իրականացնելու դեպքերում: Դատարանի որոշման հիման վրա արժեթղթերի ապաստեցումը կատարվում է այն չափով, որքանով այն անհրաժեշտ է դատարանի որոշմամբ նախատեսված գործառնության իրականացման համար:

14. Լրացուցիչ ծառայություններ

- 14.1. Համակարգում լրացուցիչ ծառայությունների մատուցման գործընթացը Բանկի կողմից իրականացվում է Պայմաններով սահմանված կարգով, ինչպես նաև յուրաքանչյուր առանձին դեպքի համար Դեպոզիտարիայի կողմից սահմանված պայմաններով Դեպոզիտարիայի, Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրով:
- 14.2. Բանկի միջնորդությամբ Համակարգում Թողարկողին մատուցվում են հետևյալ լրացուցիչ ծառայությունները՝
- 14.2.1. Պարտատոմսերի արժեկտրոնների վճարման, մարման, շահութաբաժինների վճարման հետ կապված գործառնությունների գրանցում.
- 14.2.2. Օրենքով և Թողարկողի կանոնադրությամբ սահմանված՝ Թողարկողի տեղաբաշխված արժեթղթերի ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողություն.
- 14.2.3. Ծանուցում Թողարկողին իր կողմից տեղաբաշխված արժեթղթերով իրականացված գործառնությունների մասին, որը ներառում է տվյալ արժեթղթերի փոխանցման, գրավի կամ այլ հիմքով այդ արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ տեղեկությունների տրամադրում:

- 14.3. Թողարկողը լրացուցիչ ծառայություններ ստանալու համար Բանկ է ներկայացնում Անհրաժեշտ փաստաթղթերը: Ընդ որում, <<Օրենքով և թողարկողի կանոնադրությամբ սահմանված՝ արժեթղթերի ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողություն>> ծառայության դեպքում՝ նաև ամփոփաթերթ /այսուհետ՝ Ամփոփաթերթ/, որը ներառում է տեղեկություններ տվյալ արժեթղթով հավաստված իրավունքների սահմանափակման կամ նախապատվության իրավունքի պահպանման Դեպոզիտարիայի կողմից կիրառվելիք հսկողական մեխանիզմների վերաբերյալ՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության և սույն ծառայության համար ներկայացված փաստաթղթերի դրույթները:
- 14.4. Բանկը լրացուցիչ ծառայություն մատուցում է Թողարկողին համապատասխան ծառայության մատուցման պայմանագրի կնքումից հետո, որը կնքվում է Անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- 14.5. Թողարկողը Պարտատոմսերի արժեկտրոնների վճարման, մարման, շահութաբաժինների վճարման օրվա (եթե վճարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա հաջորդ աշխատանքային օրվա) մինչև ժամը 12:00 պարտավոր է ապահովել համապատասխան հանձնարարականում նշված գումարի չափով դրամական միջոցների փոխանցումը Բանկի՝ դրամական վերջնահաշվարկի համար նախատեսված հաշվին:
- 14.6. Դեպոզիտարիան Պարտատոմսերի արժեկտրոնների վճարման, մարման, շահութաբաժինների վճարման հետ կապված ծառայությունները Թողարկողին մատուցում է այն Հաշվետերերի համար, որոնց արժեթղթերի հաշիվներում առկա են բանկային հաշիվների մասին տվյալներ:
- 14.7. Բանկը լրացուցիչ ծառայությունների մատուցումն իրականացնում է հետևյալ կարգով.
- 14.7.1. **Պարտատոմսերի արժեկտրոնների վճարման, մարման, շահութաբաժինների վճարման հետ կապված ծառայությունների** մատուցման համար Թողարկողի համապատասխան հանձնարարականների հիման վրա ծրագրային համակարգում մուտքագրելով հանձնարարականում նշված տեղեկությունները՝ գրանցում է գործառնությունը, որի արդյունքում փոխանցված գումարը բաշխվում է Հաշվետերերի՝ Համակարգում գրանցված հաշվարկային հաշիվներին՝ վերջիններիս մասնակցության չափին համապատասխան, իսկ պարտատոմսերի մարման դեպքում՝ նաև մարվում են պարտատոմսերը արժեթղթերի հաշիվներից: Անվանատերը դրամական միջոցները ստանալուց հետո պարտավոր է փոխանցել դրանք սեփականատիրոջ բանկային հաշվին:
- 14.7.2. **Օրենքով և Թողարկողի կանոնադրությամբ սահմանված՝ Թողարկողի թողարկված արժեթղթերի ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողություն ծառայության** մատուցման դեպքում պայմանագրի կնքման հաջորդ աշխատանքային օրը համարվում է ծառայության մատուցման սկիզբ (եթե պայմանագրով կամ ամփոփաթերթով այլ ժամկետ սահմանված չէ), երբ Բանկի կողմից Համակարգում կատարվում է համապատասխան գրառում սահմանափակման վերաբերյալ: Յուրաքանչյուր անգամ, երբ Բանկ են դիմում գրանցելու գործառնություն, որի նկատմամբ Համակարգում առկա է համապատասխան գրառում սահմանափակման մասին և առկա են տվյալ գործառնության մերժման հիմքեր՝ համաձայն ամփոփաթերթի, ապա Բանկը մերժում է տվյալ գործառնության գրանցումը և գրավոր ներկայացնում գործառնության մերժման պատճառները կամ պահանջում լրացուցիչ փաստաթղթեր, որի մասին դրույթներ սահմանված են ամփոփաթերթում, որոնք անհրաժեշտ են սահմանված

սահմանափակման/նախապատվության իրավունքի պահպանման նկատմամբ լիարժեք հսկողություն իրականացնելու նկատմամբ:

14.7.3. **Թողարկողին իր կողմից տեղաբաշխած արժեթղթերի շարժի մասին (արժեթղթերի փոխանցման հանձնարարականների) և գրավի կամ այլ հիմքով այդ արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ ծանուցման ծառայության** դեպքում ծառայության մատուցման պայմանագրի կնքման հաջորդ աշխատանքային օրը համարվում է ծառայության մատուցման սկիզբ, որից էլ սկսած Բանկը Համակարգում Թողարկողի արժեթղթերի շարժով և գրավի հիմքով արգելադրմամբ պայմանավորված գործառնության գրանցման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին ծանուցում է Թողարկողին՝ պայմանագրով սահմանված կարգով:

15. Պետական պարտատոմսերի հաշվառում և պետական պարտատոմսերով գործառնությունների գրանցում

- 15.1. Պայմաններում սահմանված պետական պարտատոմսերի պահառության կամ ենթապահառության գործառնությունները կարգավորվում են ՀՀ օրենքներով, դրանց հիման վրա ընդունված ՀՀ Կենտրոնական Բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության նորմատիվ իրավական ակտերով, ՀՀ Կենտրոնական Բանկի հետ Դեպոզիտարիայի կնքած պայմանագրով, Դեպոզիտարիայի կանոններով և Դեպոզիտարիայի այլ իրավական ակտերով:
- 15.2. Պետական պարտատոմսերի մարման սպասարկումը, արժեկտրոնային եկամտի վճարման հետ կապված գործառնությունները Համակարգում իրականացվում են Դեպոզիտարիայի և ՀՀ Կենտրոնական Բանկի միջոցով և կատարվում է շրջանառության մեջ գտնվող այդ թողարկման համարի բոլոր պետական պարտատոմսերի համար:
- 15.3. Պետական պարտատոմսերի մարման (մասնակի մարման, արժեկտրոնային եկամտի վճարման) օրը, մինչև տվյալ գործառնության ավարտը տվյալ պետական պարտատոմսերով չեն կարող կատարվել որևէ այլ տիպի գործառնություններ:
- 15.4. Դեպո հանձնարարականները կարող են Բանկ ներկայացվել թղթային, էլեկտրոնային կամ ֆաքսիմիլային եղանակով: Դեպո հանձնարարականների ներկայացման եղանակը ընտրվում է Հաշվետիրոջ կողմից, վերջինիս կամ նրա (իրավասու անձի) պատշաճ վավերացմամբ:
- 15.5. Բանկը դեպո հանձնարարականը կատարում է հանձնարարականում նշված օրը՝ մինչև 16:00, եթե այն ներկայացվել է մինչև այդ օրվա 15:30-ը, և առկա են գործառնության կատարման համար Անհրաժեշտ փաստաթղթերը և պայմանները, իսկ 15:30-ից ուշ ներկայացնելու դեպքում՝ հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 16:00:
- 15.6. ՀՀ օրենսդրությամբ և/կամ Պայմաններով սահմանված հիմքերի առկայության դեպքում, Բանկը դեպո հանձնարարականի կատարումը մերժում է ոչ ուշ, քան դրա տրմանը հաջորդող 2-րդ աշխատանքային օրը:
- 15.7. Բանկը գործառնության գրանցման դեպքում Հաճախորդին տրամադրում է դեպո հաշվից քաղվածքը կամ գրավադրման վերաբերյալ տեղեկանքը, իսկ գործառնության չգրանցման դեպքում՝ այդ մասին հաշվետվություն՝ վերադարձնելով Հաճախորդին համապատասխան հանձնարարականը՝ ներառելով մերժման պատճառները:

- 15.8. Բանկը կարող է Հաճախորդին հեռախոսով տեղեկացնել իր կողմից ներկայացված հանձնարարականների կատարման մասին, եթե վերջինս հեռախոսով դիմում է Բանկին՝ պայմանով, եթե ապահովված է Հաճախորդի նույնականացումը Բանկի աշխատակցի կողմից:
- 15.9. Բանկի միջնորդությամբ պետական պարտատոմսերի հաշվառման և դրանցով իրականացվող գործառնությունների գրանցման ծառայությունները ներառում են.
- 15.9.1. Պետական պարտատոմսերի առուվաճառքի, ռեպո (հակադարձ ռեպո), պետական պարտատոմսերի փոխանակում, ՀՀ օրենսդրությամբ թույլատրված այլ գործարքներ,
 - 15.9.2. Առանց հանդիպակաց դրամական միջոցների փոխանցման (գրավառուի կողմից առանց փոխառության միաժամանակյա տրամադրման) պետական պարտատոմսերի գրավադրում,
 - 15.9.3. Հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ (գրավառուի կողմից փոխառության միաժամանակյա տրամադրմամբ) պետական պարտատոմսերի գրավադրում,
 - 15.9.4. Հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ (գրավատուի կողմից փոխառության/պարտավորության միաժամանակյա մարմամբ) պետական պարտատոմսերի գրավադրման դադարեցում,
 - 15.9.5. Առանց հանդիպակաց դրամական միջոցների փոխանցման պետական պարտատոմսերի գրավադրման դադարեցում,
 - 15.9.6. Գրավի առարկայից հրաժարում (երբ գրավառուի հանդեպ հիմնական պարտավորության չկատարման պարագայում գրավատուն հրաժարվում է գրավի առարկայից կամ դրա մի մասից՝ հանձնելով դրանք գրավառուին ի սեփականություն),
 - 15.9.7. Գրավադրված պետական պարտատոմսերի իրացման գումարի հաշվին գրավառուի պահանջների բավարարում,
 - 15.9.8. Գրավի առարկայի փոխարինում (երբ գրավի պայմանագրով գրավադրվել են պետական պարտատոմսեր, որոնց մարման (մասնակի մարման) ժամկետը նախորդում է գրավի պայմանագրում սահմանված հիմնական պարտավորության կատարման ժամկետին կամ գրավի պայմանագրով սահմանված այլ դեպքերում),
 - 15.9.9. Գրավատուի փոխարինում (երբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն անցնում է այլ անձի՝ պահպանելով գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ գրավառուի իրավունքը),
 - 15.9.10. Գրավառուի փոխարինում (երբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավառուի գրավի իրավունքը փոխանցվում է այլ անձի՝ պահպանելով գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքը),
 - 15.9.11. Դատարանի որոշման հիման վրա պետական պարտատոմսերի նկատմամբ իրավունքների սահմանափակում, փոխանցում, սահմանափակման դադարեցում:
- 15.10. Պետական պարտատոմսերի հաշվառման և դրանցով իրականացվող գործառնությունների գրանցումը Բանկը իրականացնում է, երբ
- 15.10.1. Հաճախորդը Բանկ է ներկայացնում Անհրաժեշտ փաստաթղթերը, կամ
 - 15.10.2. օրենքով նախատեսված դեպքերում Դեպոզիտարիան, պետական լիազոր մարմինը կամ այլ շահագրգիռ անձը Բանկ է ներկայացնում Անհրաժեշտ փաստաթղթերը:
- 15.11. Պետական պարտատոմսերի հաշվառման և դրանցով իրականացվող գործառնությունների գրանցման համար նախապայմաններ են՝

- 15.11.1. հաճախորդը պետք է ունենա Դեպո հաշիվ, որը բացվում է Հաճախորդի հանձնարարականի հիման վրա, տրամադրի Բանկին ՀՀ տարածքում գործող որևէ առևտրային բանկում բանկային (ընթացիկ) հաշվեհամարը, (բացառությամբ օտարերկրյա անվանատերերի):
- 15.11.2. հանդիպակաց՝ միաժամանակյա դրամական միջոցների փոխանցմամբ կատարվող գործառնությունների դեպքում, Հաճախորդը պետք է ապահովի գործարքի առարկա գումարը Բանկի՝ դրամական վերջնահաշվարկի համար նախատեսված հաշվին:
- 15.12. Բանկը տեղեկացնում է Բանկ դիմած անձին մերժման մասին՝ նշելով մերժման պատճառները: Հաշվետիրոջ պահանջով Դեպո հանձնարարականի մերժումը կարող է կատարել գրավոր ձևով: Մերժման հիմքեր են հանդիսանում.
 - 15.12.1. Դեպո հանձնարարականը չի բավարարում սահմանված պահանջներին,
 - 15.12.2. Դեպո հանձնարարականը առաջ է բերում հիմնավոր կասկածներ օրինական լինելու հարցում,
 - 15.12.3. Դեպո հանձնարարականի կատարումը կհանգեցնի ՀՀ օրենսդրության պահանջների խախտման,
 - 15.12.4. Հաշվետիրոջ դեպո հաշվի կարգավիճակը թույլ չի տալիս կատարել հանձնարարականում նշված գործառնությունը,
 - 15.12.5. Պետական պարտատոմսերի քանակը և կարգավիճակը (պետական պարտատոմսերի ծանրաբեռնում 3-րդ անձանց իրավունքով, գրավադրում և այլն) կամ անհրաժեշտ ծավալով դրամական միջոցների բացակայությունը թույլ չի տալիս կատարել հանձնարարականում նշված գործառնությունը,
 - 15.12.6. Դեպո հանձնարարականը թույլ չի տալիս նույնականացնել պետական պարտատոմսերը,
 - 15.12.7. Դեպո հանձնարարականի հետ ներկայացված չեն Անհրաժեշտ փաստաթղթերը կամ դրանք ներկայացվել են ոչ բավարար տեղեկություններով,
 - 15.12.8. Դեպո հանձնարարականի ներկայացմանը հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում ի հայտ չեն եկել այն հանգամանքները, որի դեպքում հնարավոր կդառնար կատարել հանձնարարականը,
 - 15.12.9. Հաշվետիրոջ պահառության ծառայությունների մատուցումը կասեցված է Բանկի կամ Դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով,
 - 15.12.10. Այլ հիմնավոր պատճառների առկայության դեպքում:
- 15.13. **Երկրորդային շուկայում պետական պարտատոմսերով իրականացվում են առքուվաճառքի, ռեպո (հակադարձ ռեպո), պետական պարտատոմսերի փոխանակում և ՀՀ օրենսդրությամբ թույլատրված այլ գործարքներ:** Ընդ որում,
 - 15.13.1. Դեպո հաշվարկները Դեպոզիտարիայի, գործարքի երկրորդ կողմին պահառության ծառայություններ մատուցող անձի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունների բազմությունն է, որի արդյունքում գործարքի մասնակիցների միջև իրականացվում է պետական պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում «Առաքում վճարման դիմաց» (DVP) կամ «Ազատ առաքում» սկզբունքով:
 - 15.13.2. Պետական պարտատոմսերի ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների Դեպո և դրամական հաշվարկներն իրականացվում են առքուվաճառքի գործարքների հաշվարկների կանոնների համաձայն:

- 15.13.3. Առքուվաճառքի, ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների առարկա կարող են հանդիսանալ միայն այն պետական պարտատոմսերը, որոնց նկատմամբ դրանց սեփականատիրոջ իրավունքները սահմանափակված չեն (ազատ պարտատոմսերի կարգավիճակով Դեպո հաշվում առկա պետական պարտատոմսերը):
- 15.14. **Պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացումը, որտեղ**
- 15.14.1. Պետական պարտատոմսերի գրավատու կարող է հանդիսանալ միայն դրանց սեփականատեր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:
- 15.14.2. Պետական պարտատոմսերի գրավատու կարող է լինել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ՝ անկախ սեփականության իրավունքով իրեն պատկանող պետական պարտատոմսերի առկայությունից:
- 15.14.3. Գրավառուն գրավի պայմանագիրը կնքելուց առաջ պետք է ունենա Համակարգում բացված Սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվ:
- 15.14.4. Գրավի առարկա կարող են հանդիսանալ միայն այն պետական պարտատոմսերը, որոնց նկատմամբ գրավատուի իրավունքները սահմանափակված չեն (ազատ պարտատոմսերի Դեպո հաշվում առկա պետական պարտատոմսերը), և որոնցով ՀՀ օրենսդրության համաձայն՝ կարող են կատարվել գրավադրման գործառնություններ:
- 15.14.5. Պետական պարտատոմսերի գրավադրումը կարող է իրականացվել միայն ՀՀ օրենսդրության համաձայն գրավատուի և գրավառուի միջև գրավոր պայմանագիր կնքելու և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով պետական պարտատոմսերի նկատմամբ գրավի իրավունքը գրանցելու միջոցով:
- 15.14.6. Պահառության վերցված պետական պարտատոմսերի նկատմամբ գրավի իրավունքը ծագում է Համակարգում այն գրանցվելու պահից:
- 15.15. **Առանց հանդիպակաց դրամական միջոցների փոխանցման, պետական պարտատոմսերի գրավադրման գործառնությունների** դեպքում պետական պարտատոմսերի գրավադրումը հոգուտ գրավառուի չի ուղեկցվում միաժամանակ գրավառուի կողմից գրավատուին փոխառության տրամադրմամբ: Պետական պարտատոմսերի գրավադրման գործառնությունը նախաձեռնում է գրավատուն:
- 15.16. **Հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ պետական պարտատոմսերի գրավադրման գործառնությունները** կատարվում են այն դեպքում, երբ գրավառուի կողմից փոխառության/վարկի տրամադրումը գրավատուին և վերջինիս կողմից պետական պարտատոմսերի գրավադրումը հոգուտ գրավառու-վարկատուի իրականացվում է միաժամանակ: Հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ արժեթղթերի գրավադրման գործառնությունը նախաձեռնվում է միաժամանակ գրավատուի և գրավառուի կողմից: Հաճախորդ-գրավառուն միևնույն ժամանակ պետք է ապահովի Բանկի՝ դրամական վերջնահաշվարկի համար նախատեսված հաշվին գրավի գրանցման համար անհրաժեշտ դրամական միջոցները անհրաժեշտ ծավալով:
- 15.17. **Առանց հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ պետական պարտատոմսերի գրավից ազատման գործառնությունները** իրականացվում են այն դեպքում, երբ գրավառուն նախաձեռնում է գրավից պետական պարտատոմսերի ազատման գործառնությունն առանց գրավատուի կողմից միաժամանակ հիմնական պարտավորության (վարկի) մարման գործառնության իրականացման:
- 15.18. **Հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ պետական պարտատոմսերի գրավից ազատման գործառնությունների** իրականացման դեպքում պետական պարտատոմսերի գրավից

ազատման գործառնությունը նախաձեռնվում է միաժամանակ գրավատուի և գրավառուի կողմից: Հաճախորդ-գրավատուն միևնույն ժամանակ պետք է ապահովի Բանկի՝ դրամական վերջնահաշվարկի համար նախատեսված հաշվին գրավից ազատման համար անհրաժեշտ դրամական միջոցները անհրաժեշտ ծավալով:

15.19. **Գրավի առարկայից հրաժարման գործառնությունը** կատարվում է այն դեպքում, երբ գրավառուի նկատմամբ պարտավորության չկատարման դեպքում, առանց դատարան դիմելու, գրավատուն հրաժարվում է գրավի առարկա հանդիսացող պետական պարտատոմսերից (կամ դրանց մի մասից)՝ հանձնելով դրանք ի սեփականություն գրավառուին: Գրավի առարկայից հրաժարման գործառնությունը նախաձեռնվում է Գրավատուի կողմից, ընդ որում Գրավի առարկայից հրաժարման գործառնությունը կարող է կատարվել միայն գրավի պայմանագրում կամ գրավատուի և գրավառուի միջև առանձին կնքված համաձայնագրում նման պայման սահմանված լինելու դեպքում:

15.20. **Գրավադրված պետական պարտատոմսերի (իրացման գումարի) հաշվին գրավառուի պահանջների բավարարումը** գործառնությո է, որի արդյունքում առանց դատարան դիմելու, գրավադրված պետական պարտատոմսերն վաճառվում են երրորդ անձին, իսկ պետական պարտատոմսերի կամ դրանց իրացումից ստացված գումարի հաշվին բավարարվում են գրավառուի պահանջները, ընդ որում՝ առանց դատարան դիմելու գրավադրված պետական պարտատոմսերի իրացման գումարի հաշվին գրավառուի պահանջների բավարարման գործառնությունը կարող է կատարվել այն դեպքում, եթե այդպիսի գործառնություն նախատեսված է գրավադրման պայմանագրում կամ գրավատուի և գրավառուի միջև առանձին կնքված համաձայնագրում:

15.21. **Գրավի առարկա հանդիսացող պետական պարտատոմսերի փոխարինման գործառնությունն** իրականացվում է այն դեպքում, երբ գրավի պայմանագրով գրավադրվել են պետական պարտատոմսեր, որոնց մարման (մասնակի մարման) ժամկետը նախորդում է գրավի պայմանագրում սահմանված հիմնական պարտավորության կատարման ժամկետին, կամ գրավի պայմանագրով սահմանված այլ դեպքերում: Ընդ որում

15.21.1. Գրավի առարկայի փոխարինման դեպքում նախկինում գրավադրված (փոխարինվող) պետական պարտատոմսերի նկատմամբ դադարում է գրավը, միաժամանակ փոխարինող պետական պարտատոմսերը գրավադրվում են՝ փոխարինող պետական պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքի գրանցմամբ:

15.21.2. Գրավի առարկա հանդիսացող պետական պարտատոմսերի փոխարինումը կարող է կատարվել միայն գրավառուի համաձայնության դեպքում, եթե օրենքով կամ գրավի պայմանագրով այլ բան սահմանված չէ:

15.21.3. Գրավի առարկայի փոխարինման դեպքում գրավի պայմանագրում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ:

15.21.4. Գրավի առարկայի փոխարինման գործառնությունը նախաձեռնվում է միաժամանակ գրավատուի և գրավառուի կողմից:

15.22. **Պետական պարտատոմսերի գրավատուի փոխարինումը գործառնություն է**, որի արդյունքում գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է այլ անձի (նոր գրավատուի)՝ պահպանելով գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքը: Պետական պարտատոմսերի գրավատուի փոխարինման գործառնությունը նախաձեռնվում է գրավատուի կողմից կամ իրավահաջորդության

դեպքում՝ պետական պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերած անձի (նոր գրավատուի) կողմից:

15.23. Պետական պարտատոմսերի գրավառուի փոխարինումը գործառնություն է, որի արդյունքում գրավառուի գրավի իրավունքը փոխանցվում է այլ անձի՝ պահպանելով գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքը: Գրավառուի փոխարինման գործառնությունը նախաձեռնվում է նախկին գրավառուի կողմից, ընդ որում

15.23.1. Գրավառուի փոխարինումը գրավառուի կողմից գրավի պայմանագրից բխող իր իրավունքների փոխանցումն է այլ անձի (նոր գրավառուի)՝ պահանջը զիջելու միջոցով պարտատիրոջ իրավունքները այլ անձի անցնելու կանոններին համաձայն:

15.23.2. Գրավառուի կողմից գրավի պայմանագրից բխող իր իրավունքները նոր գրավառուին զիջելը վավեր է, եթե նոր գրավառուին զիջվել է գրավով ապահովված հիմնական պարտավորությամբ պարտապանի նկատմամբ պահանջի իրավունքը:

15.23.3. Գրավառուի իրավունքները նոր գրավառուին անցնելու համար գրավատուի համաձայնությունը չի պահանջվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

15.23.4. Գրավառուի փոխարինման դեպքում փոփոխվում են միայն գրավի իրավունքի գրառումները՝ նախկին գրավառուի գրավի իրավունքը դադարում է, այդ գրավի իրավունքը վերագրանցվում է հոգուտ նոր գրավառուի:

15.24. Գրավադրված պետական պարտատոմսերի մարումը գործառնություն է, որի արդյունքում, համաձայն պետական պարտատոմսերի թողարկման պայմանների, իրականացվում է գրավադրված պետական պարտատոմսերի կամ մասնակի մարման դեպքում դրանց մի մասի մարումը, դադարում են մարված պետական պարտատոմսերի նկատմամբ բոլոր իրավունքները, և առաջանում են համապատասխան գույքային իրավունքներ մարման արդյունքում գոյացած դրամական միջոցների նկատմամբ:

15.24.1. Գրավադրված պետական պարտատոմսերի մարման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ գրավով ապահովված պարտավորությունները ժամանակին չկատարելու, գրավի առարկան ժամանակին չփոխարինելու կամ այլ դեպքերում պետական պարտատոմսերը տվյալ թողարկման մարման, մասնակի մարման օրվա դրությամբ մնում են գրավով սահմանափակված:

15.24.2. Գրավադրված պետական պարտատոմսերի մարումն իրականացվում է տվյալ թողարկման տեղաբաշխված պետական պարտատոմսերի ողջ ծավալի մարման գործառնության հետ միաժամանակ և նախաձեռնվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

15.24.3. Գրավադրված պետական պարտատոմսերի մարման դեպքում գրավի առարկա են դառնում մարման արդյունքում գոյացած դրամական միջոցները, և իրականացվում է գրավի իրավունքի վերաձևակերպում (վերահաշվառում) որպես դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքի:

15.25. Գրավադրված պետական պարտատոմսերի մարման արդյունքում գոյացած դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքի հաշվառումը իրականացվում է հետևյալ կերպ՝

15.25.1. ՀՀ կենտրոնական բանկը գրավադրված պետական պարտատոմսերի մարման արդյունքում գոյացած դրամական միջոցները փոխանցում է ՀՀ կենտրոնական բանկում Դեպոզիտարիայի հատուկ միջանկյալ հաշվի վրա (երբ Գրավատուն Բանկի հաճախորդն է),

և իրականացվում է գրավի իրավունքի վերաձևակերպում (վերահաշվառում)՝ որպես դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքի: Հաշվառումը վարվում է ըստ յուրաքանչյուր գրավատուի, գրավառուի և պետական պարտատոմսերի թողարկումների:

15.25.2. ոչ ուշ, քան 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, Բանկի Հաճախորդ-Գրավատուն Բանկ պետք է ներկայացնի համաձայնագիր, ըստ որի՝ գրավատուն և գրավառուն համաձայնում են առ այն, որ գրավի առարկա հանդիսացող պետական պարտատոմսերի մարումից առաջացած դրամական միջոցները հաշվառվեն երրորդ անձ հանդիսացող առևտրային բանկում: Տվյալ համաձայնագիրը պետք է վավերացվի տվյալ առևտրային բանկի կողմից, գրավատուի, գրավառուի, Դեպոզիտարիայի և գրավառուին պահառության ծառայություններ մատուցող անձի կողմից: Եթե հինգ բանկային օրվա ընթացքում Հաճախորդ-Գրավատուն Բանկ չի ներկայացնում վերը նշված փաստաթղթերը, ապա ՀՀ կենտրոնական բանկը իրավասու է գրավադրված գումարները փոխանցել նոտարի դեպոզիտ՝ միաժամանակ տրամադրելով նոտարին տեղեկություններ գրավադրված գումարների հետ կապված Դեպոզիտարիայի և գրավառուին պահառության ծառայություններ մատուցող անձի վերաբերյալ:

15.25.3. ստացված համաձայնագրի հիման վրա դրամական միջոցները փոխանցվում են միջանկյալ հաշվից գրավի իրավունքը հաշվառող առևտրային բանկի թղթակցային հաշվի վրա, հանվում է դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքը ՀՀ ԿԲ և Համակարգի հաշվառումից:

15.25.4. գրավի իրավունքը հաշվառող առևտրային բանկը բանկային փոխանցման և իրեն ներկայացված համաձայնագրի օրինակի հիման վրա մուտքագրում է դրամական միջոցներն իր մոտ բացված գրավատուի հատուկ գրավային դեպոզիտային հաշվի վրա և հետագայում իրականացնում է այդ գրավի հաշվառման սպասարկումը գրավատուի և գրավառուի հանձնարարականների հիման վրա, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ դատարանի և (կամ) հարկադիր կատարողի որոշման հիման վրա:

15.26. **Գրավադրված պետական պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարման գործառնությունը** իրականացվում է տվյալ թողարկման տեղաբաշխված պետական պարտատոմսերի ողջ ծավալի տոկոսների վճարման գործառնության հետ:

15.26.1. Գրավառուի գրավի իրավունքը տարածվում է գրավադրված պետական պարտատոմսերից ստացված տոկոսների վրա՝ գրավի պայմանագրով նախատեսված դեպքերում: Այս դեպքում պետական պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարման գործառնությունը իրականացվում է գրավադրված պետական պարտատոմսերի մարման՝ Պայմաններով սահմանված կարգով:

Գրավի պայմանագրում նման պայման սահմանված չլինելու դեպքում տոկոսային կամ արժեկտրոնային եկամուտը պետք է ազատ տնօրինվի գրավատուի կողմից:

16. Օտարերկրյա պահառուների միջոցով հաշվառվող արժեթղթերի ենթապահառություն և գործառնությունների իրականացում

16.1. Մույն պայմաններով սահմանված օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահառության կամ ենթապահառության գործառնությունները կարգավորվում են Դեպոզիտարիայի կանոններով, դրանց հիման վրա Բանկի միջնորդությամբ Դեպոզիտարիայի և արժեթղթերի

սեփականատիրոջ միջև կնքված ենթապահառության համաձայնագրով (ձևը սահմանվում է Դեպոզիտարիայի կողմից, որը կնքվում է վերջինիս առաջադրմամբ), ինչպես նաև օտարերկրյա պահառուի կանոններով:

- 16.2. Բանկի միջնորդությամբ Դեպոզիտարիան ողջամիտ ժամկետում Հաշվետերերին է փոխանցում օտարերկրյա պահառուից ստացված՝ արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերով կորպորատիվ գործողությունների մասին տեղեկությունները: Եթե Հաշվետերերը Բանկի միջնորդությամբ Դեպոզիտարիային ժամանակին չեն ներկայացնում արժեթղթերով կամավոր կորպորատիվ գործողությունների իրականացման հանձնարարական, ապա Դեպոզիտարիան իր նախաձեռնությամբ չի իրականացնում այդ իրավունքները:
- 16.3. Արժեթղթերի սեփականատերը նախքան օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերով գործառնություններ իրականացնելը, Բանկի միջնորդությամբ Դեպոզիտարիայի հետ կնքում է ենթապահառության եռակողմ համաձայնագիր (այսուհետ սույն գլխում նաև՝ համաձայնագիր), որի ձևը սահմանվում է Դեպոզիտարիայի կողմից, որը կնքվում է վերջինիս առաջադրմամբ: Եթե արժեթղթերի սեփականատերը չունի Բանկի միջնորդությամբ արժեթղթերի հաշիվ, վերջինիս համար բացվում է արժեթղթերի հաշիվ՝ համաձայն Պայմանների: Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերով գործառնություններ իրականացնելու համար Բանկը Հաճախորդից ստանում է անհրաժեշտ հանձնարարական, ընդ որում՝
 - 16.3.1. Համակարգի ներսում գործառնությունների իրականացման համար ներկայացվում են Պայմանների համապատասխան գլխում սահմանված՝ տվյալ գործառնության համար Անհրաժեշտ փաստաթղթերը,
 - 16.3.2. Համակարգից դուրս՝ օտարերկրյա պահառուի մոտ Դեպոզիտարիայի համար բացված ենթապահառության հաշվով իրականացման ենթակա գործառնությունների համար ներկայացվում են Դեպոզիտարիայի և (կամ) օտարերկրյա պահառուի կանոններով սահմանված հանձնարարականը և մյուս անհրաժեշտ փաստաթղթերը՝ ոչ ուշ, քան օտարերկրյա պահառուի կանոններով սահմանված վերջնաժամկետից առնվազն 1 աշխատանքային օր առաջ:
- 16.4. Արժեթղթերի հաշվին հաշվառված օտարերկրյա արժեթղթերից բխող պարտավորությունների կատարման պատասխանատվությունը կրում է Հաշվետերը, բացառությամբ այն դեպքերի, երբ Հաշվետիրոջ կողմից Դեպոզիտարիան նախապես օրենքով սահմանված կարգով լիազորված է եղել կատարել արժեթղթերից բխող որևէ պարտավորություն:
- 16.5. Բանկի միջնորդությամբ Դեպոզիտարիա ներկայացված Հաշվետիրոջ համապատասխան հանձնարարականի հիմքով, Դեպոզիտարիան, կարող է աջակցել օտարերկրյա արժեթղթերից բխող իրավունքների իրականացման գործում, այդ թվում նաև՝
 - 16.5.1. օտարերկրյա արժեթղթերի դիմաց վճարվող եկամուտների ստացում, հաշվարկում և փոխանցում.
 - 16.5.2. արժեթղթերի սեփականատերերի (բաժնետերերի) ժողովին Հաշվետիրոջ շահերի ներկայացում (Հաշվետիրոջ կողմից լիազորագրի հիման վրա հեռակա և առկա քվեարկությամբ մասնակցություն).
 - 16.5.3. աջակցություն Հաշվետիրոջն օտարերկրյա արժեթղթերի թողարկողի, թողարկված արժեթղթերի մասին տեղեկությունների ստացման, թողարկողի բաժնետերերի ժողովի

օրակարգի վերաբերյալ առաջարկությունների և կառավարման մարմիններում թեկնածուների ներկայացման գործում.

16.5.4. աջակցություն օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող ներդրումային փայերի բաժանորդագրության և մարման հայտերի ընդունման և փոխանցման համար:

16.6. Օտարերկրյա արժեթղթերի սեփականատերերի կողմից իրենց իրավունքների իրականացման նպատակով Բանկի միջնորդությամբ Դեպոզիտարիան

16.6.1. իրականացնում է պահառության պայմանագրով, օտարերկրյա արժեթղթերի ենթապահառության համաձայնագրով (առկայության դեպքում), Դեպոզիտարիայի կանոններով և Պայմաններով սահմանված բոլոր գործողությունները.

16.6.2. Օտարերկրյա պահառուից ստանում է օտարերկրյա արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ և փաստաթղթեր, դրանք փոխանցում Հաշվետերերին.

16.6.3. Հաշվետերերից ստացված տեղեկությունները և փաստաթղթերը փոխանցում է Օտարերկրյա պահառուին.

16.6.4. Հաշվետիրոջ հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն ձեռնարկում է օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթի թողարկողի գրանցող երկրի օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ գործողությունները՝ թողարկողի կողմից արժեթղթերին վերաբերող էական գործառնությունների իրականացման ընթացքում Հաշվետիրոջ շահերի պաշտպանության ուղղությամբ.

16.6.5. Հաշվետերերի իրավունքների իրականացման նպատակով թողարկողի կողմից արժեթղթերի սեփականատերերի ցուցակի կազմման ընթացքում Օտարերկրյա պահառուին է փոխանցում Հաշվետերերի մասին տեղեկություններ.

16.6.6. Հաշվետիրոջ հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն ապահովում է բաժնետերերի ընդհանուր ժողովում Հաշվետիրոջ ձայնի իրավունքի իրականացումը՝ ընդհանուր ժողովում Դեպոզիտարիայի ներկայացուցչի մասնակցության և Հաշվետիրոջ կարգադրությամբ քվեարկելու միջոցով:

16.7. Օտարերկրյա արժեթղթերի թողարկողի այն գործողությունները (այդ թվում՝ կորպորատիվ գործողությունները), որոնք վերաբերում են տվյալ դասի բոլոր արժեթղթերին և դրանց բոլոր սեփականատերերին (սույն գլխում՝ զրոբալ գործառնություններ) և արտացոլվում են Դեպոզիտարիայի Օտարերկրյա պահառուի մոտ բացված անվանատիրոջ հաշվում, Օտարերկրյա պահառուի կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա, արտացոլվում են նաև տվյալ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի)՝ Համակարգում բացված հաշիվներում:

16.8. Դեպոզիտարիան հաճախորդին Բանկի միջնորդությամբ տեղեկացնում է տեղի ունեցող գլոբալ գործառնության մասին՝ Դեպոզիտարիայի կանոններով, ենթապահառության վերաբերյալ համաձայնագրով (առկայության դեպքում) սահմանված եղանակով:

16.9. Օտարերկրյա արժեթղթերի փոխարկման գործառնությունն իրականացվում է արժեթղթերի փոխարկման մասին թողարկողի որոշման և Օտարերկրյա պահառուի կողմից Դեպոզիտարիայի անվանատիրոջ հաշվին նոր դասի արժեթղթերի փոխանցված քանակի վերաբերյալ տրված քաղվածքի համապատասխան: Հաշվարկային տվյալների և փոխանցված արժեթղթերի քանակի միջև տարբերությունների առկայության դեպքում Համակարգում չի կատարվում գործառնությունը, ընդհուպ մինչև վիճահարույց հարցի վերջնական կարգավորումը: Արժեթղթերի փոխարկման արդյունքում, եթե հաճախորդների արժեթղթերի քանակը կազմում է կոտորակային մնացորդ,

ապա կոտորակային մասի հետգնումն իրականացվում է օտարերկրյա արժեթուղթը գրանցող երկրի օրենսդրության պահանջներին համապատասխան: Արժեթղթերի փոխարկման համար հիմք է հանդիսանում Օտարերկրյա պահառուի կողմից տրված քաղվածքը, որը հաստատում է Դեպոզիտարիայի անվանատիրոջ հաշվով (Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի անվանատիրոջ հաշվով) փոխարկման գործառնությունների կատարումը: Արժեթղթերի փոխարկման գործառնությունները կատարվում են Դեպոզիտարիայի անվանատիրոջ հաշվին (Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի անվանատիրոջ հաշվին) փոխարկման գործառնությունների կատարումը հավաստող փաստաթղթի ստացման օրվա ընթացքում, որի վերաբերյալ հաշվետվությունը Բանկը ներկայացնում է Հաշվետերերին գործառնության կատարման օրվա հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում:

- 16.10. Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի գծով որպես եկամուտ արժեթղթերի փոխանցման գործառնությունը կատարվում է արժեթղթերի գծով եկամուտների վճարման մասին թողարկողի որոշման և Դեպոզիտարիայի անվանատիրոջ հաշվին (Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի անվանատիրոջ հաշվին) արժեթղթերի փաստացի փոխանցման վերաբերյալ Օտարերկրյա պահառուի, տրված քաղվածքներին համապատասխան, դրա ստացման օրը: Դեպոզիտարիան Բանկի միջնորդությամբ արժեթղթերի գծով որպես եկամուտ արժեթղթերի փոխանցման մասին հաշվետվություն է ներկայացնում Հաշվետիրոջը՝ գործառնության կատարման օրվա հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում:
- 16.11. Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի ենթապահառության շրջանակներում օտարերկրյա արժեթղթերի սեփականատերերի համար Դեպոզիտարիայի հաշվին փոխանցված դրամական միջոցները Դեպոզիտարիայի կողմից Համակարգում Հաշվետերերի միջև բաշխվում են տվյալ արժեթղթերին տիրապետող Հաշվետերերի միջև՝ ըստ վերջիններիս պատկանող արժեթղթերի համամասնության, եթե դրամական միջոցների փոխանցման վերաբերյալ Օտարերկրյա պահառուի (որի մոտ բացված է Կենտրոնական Դեպոզիտարիայի Օտարերկրյա արժեթղթերի անվանատիրոջ հաշիվը) կողմից ներկայացված փաստաթղթերով այլ բան նախատեսված չէ: Սույն կետով սահմանված դրամական միջոցները Դեպոզիտարիայի կողմից արտացոլվում են Բանկի՝ դրամական վերջնահաշվարկի համար նախատեսված հաշվին, որտեղից էլ իրականացվում է Հաշվետերերին փոխանցումը՝ համաձայն վերջիններիս կողմից Բանկ ներկայացված հանձնարարականների:
- 16.12. Օտարերկրյա արժեթուղթը գրանցող երկրի օրենսդրությամբ նախատեսված դեպքերում Թողարկողի կամ այլ անձանց հարցման հիման վրա Համակարգից տրամադրվում է արժեթղթերի հաշիվներում վարվող օտարերկրյա արժեթղթերի սեփականատերերի ցուցակ: Պահանջվող տեղեկությունների ձևը և կազմը սահմանվում է հարցմամբ՝ հաշվի առնելով օտարերկրյա արժեթուղթը գրանցող երկրի օրենսդրության պահանջները: Հաշվետերը պարտավորում է սույն կետում սահմանված հարցումը Բանկից ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս տրամադրել պահանջվող տեղեկությունները:
- 16.13. Դեպոզիտարիայի կողմից ներկայացված հանձնարարականների կատարման կամ մերժման վերաբերյալ Օտարերկրյա պահառուի կողմից տեղեկատվության ներկայացումից հետո (եթե դա նախատեսված է Օտարերկրյա պահառուի կանոններով և/կամ Օտարերկրյա պահառուի և Դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով), Դեպոզիտարիան հանձնարարականի

կատարման կամ մերժման վերաբերյալ գրառում է կատարում Համակարգում կամ այլ եղանակով տեղեկացնում Բանկին, որն էլ գործառնության կատարման կամ մերժման վերաբերյալ առավելագույնը հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է Հաշվետիրոջը:

- 16.14. Հաշվետերը բացի արժեթղթերի հաշվից քաղվածքի և գործառնությունների մասին տեղեկանքի, իրավասու է Բանկից պահանջել նաև այլ հաշվետվություններ և/կամ տեղեկություններ, եթե դրանք սահմանված են Օտարերկրյա պահառուի կանոններով:
- 16.15. Հաշվետերը կարող է Բանկ ներկայացնել օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերով գործառնությունների վերջնահաշվարկի կատարման հանձնարարականներ: Ընդ որում՝ առաքում վճարման դիմաց սկզբունքով վերջնահաշվարկի հանձնարարականների կատարման նպատակով Հաշվետերը պետք է ապահովի համապատասխան դրամական միջոցներ Դեպոզիտարիայի՝ Օտարերկրյա պահառուի մոտ բացված անվանատիրոջ հաշվին Օտարերկրյա պահառուի կանոններով սահմանված ժամկետներում:
- 16.16. Հաշվետերը Բանկի միջնորդությամբ պետք է ներկայացնի դրամական միջոցների ստացման (Pre-advice) հանձնարարական օտարերկրյա պահառուի մոտ բացված Դեպոզիտարիայի անվանատիրոջ հաշվին դրամական միջոցների փոխանցման դեպքում:
- 16.17. Հաշվետիրոջ կողմից օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերով հանձնարարականի ընդունվում է Բանկի կողմից յուրաքանչյուր աշխատանքային օրվա 09:30-16:30, եթե Բանկի միջնորդությամբ Դեպոզիտարիայի և Հաշվետիրոջ միջև կնքված ենթապահառության վերաբերյալ համաձայնագրով այլ, ավելի երկար ժամկետ սահմանված չէ: Գործառնական օրվա ավարտից հետո ստացված հանձնարարականն ընդունված է համարվում հաջորդ գործառնական օրվա ընթացքում:
- 16.18. Հաշվետերերի կողմից, Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերով և դրամական միջոցներով գործառնությունների իրականացման նպատակով տրվող հանձնարարականների ներկայացման պայմանները և ժամկետները պետք է համապատասխանեն Օտարերկրյա պահառուի կանոններով վերջինիս կողմից համապատասխան հանձնարարականների ընդունման պայմաններին և ժամկետներին: